

2041

ՎԵՐՁԻՆ ՕՐԵՐԸ

20

P-51

20
P-51

03 AUG 2009

ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԸ

Գրեց՝ ճ. Ֆ. ՐԸԹ ՀԼՐՖՈՐՏ

Հեղինակին ուրիշ երկասիրութիւններն են՝

Աստուծոյ Քնարը,
Ուր են Մեռեալները,
Ժողովուրդին Դրօշակը,
Ժողովուրդներուն Ազատութիւնը,
Եւայլն, եւայլն զրգեր:

(“The Last Days” in Armenian)

Հրատարակիչ՝

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ Ս. ԳԻՐԳ ՈՒՍԱՆՈՂԱՅ ՄԻՈՒԹԻՒՆ
INTERNATIONAL BIBLE STUDENTS ASSOCIATION
(Armenian Department)

117 Adams Street, Brooklyn, N. Y., U. S. A.

1929

8137
~~8037~~

24 AUG 2013

2041

ՎԵՐՁԻՆ ՕՐԵՐԸ

ՈՎԿԻԱՆՈՍՆԵՐԸ ճեղքող հսկայ շողենաւը հնչեցուցած էր իր առաջին սոյլը՝ որպէս ազգարարութիւն իր շուտափոյթ մեկնումին: Շողենաւին ամենաբարձր տախտակամածին (թափ տէֆ) վրայ կը կանգնէր Ֆիլիփ Սիտնի, ծնունդով Բրիտանացի երկտասարդ մը: Նա հինգ տարի Ամերիկայի մէջ ապրած էր: Ամերիկայի խոշոր ընկերութիւններէն մին Մր. Սիտնին գործով իր ծննդավայրը կը զրկէր: Զինք Անգլիա տանող նաւուն վրայ նա ծանօթացաւ Մր. Ճան Տէյվիտի, իրմէ մի քանի տարի մեծ Ամերիկացի անձնաւորութեան մը: Այս երկու բարեկամները որոշեցին միասին Ամերիկա վերադառնալ եւ իրենց ճամբորդութեան մասին ըստ այնմ կարգադրութիւն ըրին: Ամերիկա վերադառնալու ժամանակը հասած էր Մր. Սիտնի կ'սպասէր Մր. Տէյվիտի, որ նաւամատոյցին վրայ երեւցած չէր տակաւին: Երիտասարդ Սիտնին ուշադրութեամբ դիտած էր նաւէն ներս մտնող ամէն մէկ անձ, յուսարով Մր. Տէյվիտի նաւ մտնելը տեսնել: «Յանու'ն Դիոսի», ըսաւ նա, «այնպէս կ'երեւայ թէ բարեկամս նաւուն պիտի չհասնի»:

Մասնաւոր նաւային շողեկառք մը արագօրէն եկաւ կանդ առաւ կայարանին մէջ եւ շուտով պարպեց իր ճամբորդները, որոնք աճապարանքով նաւը մը տան: Մր. Տէյվիտ այդ խումբին մէջ չկար: Արագընթաց ինքնաշարժ մը սուրալով նաւամատոյցին մօտեցաւ: Երկու պարոններ դուրս ցատկեցին ու դէպի նաւը վաղեցին: Անոնց ոչ մէկը Մր. Տէյվիտն էր: Նաւամուտքը ներս առնուեցաւ, հսկայ նաւը խարխսլը վերցուց, ձղանաւերը (թրկ) կը ճչէին, մինչ նաւամատոյցին վրայ դանուող անձինք երթալ բարեա՛ւ կ'ա-

Made in U. S. A.

Copyright 1928 by
INTERNATIONAL BIBLE STUDENTS ASSOCIATION
Brooklyn, New York, U. S. A.



18684-58

դադակէին իրենց մեկնող բարեկամներուն : Նաւը ըս-
կաւ ճամբայ ելլել : Երիտասարդ Սիտնիի դէմքին
վրայ յուսախարութեան դրօշմը կար :

Յանկարծ նաւուն գործաւորներէն մին վեր վա-
զեց «Մր. Սիտնիի» պոռալով : Մր. Սիտնին գտնելով՝
նա ըսաւ . «Տէ'ր, անթէլ հեռագի'ր մը կայ քեզի, կը
թուի թէ կարեւոր է» : Անթէլ հեռագիրը կ'ըսէր .
«Օղանաւով ճամբայ ելած կուգամ : Նաւը կայնեցնել
տուր : — Տէյվիտ» : Այդ բոպէին պղտիկ կէտ մը երեւ-
ցաւ երկնակամարին վրայ, որ նաւուն վրայէն կրնար
տեսնուիլ : Ան հետզհետէ մեծցաւ, եւ շատ չանցած
տեսնուեցաւ որ ան ծովային օղանաւ մըն էր որ դէպի
նաւը կուգար : Օղանաւը շրջան մ'ըրաւ հսկայ շոգե-
նաւին բոլորտիքը եւ շուտով ջուրին վրայ հանդէե-
ցաւ . նաւէն սանդուխ մը վար իջեցուցին եւ Մր. Տէյ-
վիտը ներս առին :

«Պաւ'փօ, պոռաց Սիտնի : «Կը կարծէի թէ քեզ
կորսնցուցի, բայց կը տեսնեմ որ ողջ եւ առողջ ես» :

«Ուրախ եմ որ նաւուն հասայ», ըսաւ Մր. Տէյ-
վիտ : «Օղանաւին շնորհիւն էր որ կրցայ հասնիլ : Այս
առաւօտ երբ Ամսթերտամէն կը թռչէինք թամձը մէ-
զի մը հանդիպեցանք : Մեր օղանաւը մէզին վրան ե-
լաւ, յուսալով անոր վրայէն անցիլ . այդ պարագային
մեքենայական խանդարում մ'ունենալով ստիպուե-
ցանք Պելճիքայի եզերքը իջնել : Բարեբախտաբար հոն
ծովային օղանաւ մը գտայ, ու անոր միջոցաւ ահա
հոս հասայ : Արդարեւ, ներկայի մեր ունեցած փո-
խադրութեան միջոցները սքանչելի են» :

«Ծիշտ է», ըսաւ Մր. Սիտնի : «Դուն գիտես որ
Բրիտանիան գրեթէ ամէն բանի մէջ աշխարհի առաջ-
նակարդ կառավարութիւնն է : Բրիտանիան ամենա-
լաւ շոգենաւերը եւ օղանաւերը, ամենամեծ ելեւժը-
տադէտները, ամենամեծ քաղաքադէտները եւ ամե-
նահամբաւաւոր քարոզիչներն ունի . եւ շխտակը ըսե-

լով՝ ուրախ եմ որ Անգլիացի մըն եմ, թէեւ տակա-
ւին քու Ամերիկեան հայրենիքիդ մէջ կ'ապրիմ» :

Մր. Տէյվիտ իր Երիտասարդ բարեկամին նայե-
ցաւ վայրկեան մը ու յետոյ ըսաւ . «Բայց արդի ժա-
մանակուան սքանչելի փոխադրութեան միջոցներուն
պատիւը պէտք է որ Բրիտանացիներուն տրուի» :

«Ահա՛ նորէն սկսար» ըսաւ Մր. Սիտնի : «Դուք
Ամերիկացիներդ բնաւ չէք ուզեր Անգլիացիներուն
արժանի յարգ ու պատիւ ընծայել արդի դիւրու-
թիւններուն համար» :

«Ճամբորդութեան ներկայ սքանչելի միջոցնե-
րուն պատիւը ես ո'չ Ամերիկացիներուն եւ ոչ ալ եր-
կրիս վրայ գտնուած ուրիշ ոեւէ ժողովուրդի կ'ըն-
ծայեմ», յարեց Մր. Տէյվիտ : «Մենք պէտք է պատի-
ւը տանք անոր՝ որ պատուի արժանի է : Տիեզերքի
մեծ Արարիչն է որ մեր ժամանակուան սքանչելի
գիւտերը պատրաստեց» :

«Հիմակու հիմա շատ խորերը մի' երթար, Տէյ-
վիտ», ըսաւ Երիտասարդ Սիտնին : «Եկուր երթանք
այժմ ու մէյ մէկ գաւաթ թէյ խմենք, ու այն ատեն
կրնաս ինձի պատմել Եւրոպա ըրած քու ճամբոր-
դութեանդ մասին» :

Մեծաշուք նաւը իր ցոռկը (քիթը) արեւմուտք
տնկած դէպի Ամերիկա կը փութար ալիքները ճեղքե-
լով : Ճաշասրահին մէկ կողիկ անկիւնը նստած՝ Ամե-
րիկացին ու Անգլիացին միատեղ մէյմէկ գաւաթ թէյ
եւ Բրիտանացիներու յատուկ ուրիշ ուտելիքներ կը
վայելէին : Իրենց խօսակցութիւնը կրկին դարձաւ
այն կէտին որ քիչ առաջ ընդհատուած էր :

Սիտնի . — Հիմա ըսէ նայիմ, Եւրոպայի մէջ ի-
րերը ի՞նչ վիճակի մէջ էին : Բաւական վստահ եմ թէ
ամէն բան շատ լաւ վիճակի մէջ գտար :

Տէյվիտ . — Ըստ երեւոյթին՝ Եւրոպայի կացու-
թիւնը աւելի լաւ վիճակի մէջ գտայ քան ինչ որ էր

Մեծ Պատերազմի զինադադարէն անմիջապէս վերջ-
սակայն ըրձամիտ մարդիկ մտահոգուած են եւ ա-
նոնցմէ շատեր անձկութեան մէջ են: Եւրոպա ըրած
նախորդ պայտուածութիւններու՝ նկատեր էի որ մար-
դիկ մեծ վստահութիւն ունէին իրենց խորհրդատու-
ներուն՝ նամանաւանդ կղերներուն նկատմամբ: Ա-
նոնք այդ կրօնականներուն վրայ կը նայէին որպէս
պահապաններու եւ վստահելի խորհրդատուներու:
Անցեալ տասնամէկ տարուան մէջ մեծ փոփոխութիւն
մը տեղի ունեցած է: Ժողովուրդը արագօրէն կը կոր-
սնցնէ կղերներու վրայ ունեցած իր վստահութիւնը,
եւ անոնք երեւութապէս շուարումի մատնուած են եւ
ներկայ կացութեանց մասին մեծ կասկածի մէջ են:

Միտնի. — Ա՛հ, անոնք հոն Բրիտանացի կղերա-
կանի մը պէտքն ունին: Դուն գիտես որ Բրիտանիա
աշխարհի ամենամեծ կղերները կ'արտադրէ: Երբեմն
անոնց մէջէն զօրաւորագոյն մէկ մը Ամերիկա կու-
գայ: Ահա այդ ատեն է որ իրական պերճախօսութիւն
եւ իմաստալից արտայայտութիւններ կրնաս լսել:
Ձոր օրինակ, անոնք Տքթ. Փարքս Բէտմըն: Նա Բը-
րիտանացի մըն է, Անգլիոյ Ուէլինկթըն քաղաքը ծը-
նած: Այդ մարդը հրաշալիք մըն է: Նա գրեթէ ամէն
կիրակի՝ Ե. Գ. Ը. ի Պէտֆըրտ Մասնաճիւղին սրահին
մէջ կը խօսի: Նոյն ատեն՝ միլիոն տալէրնոց խոշոր
բէտիօ կայանը՝ անոր իմաստալից խօսքերը կը հե-
ռարձակէ աշխարհի ամէն կողմը: Կը համարձակիմ
քեզի ըսելու թէ նա մե՛ծ մէկ մըն է, եւ անոր ետեւը
կեցած են մեր խոշոր առեւտրականները, անոնցմէ
մին ըլլալով իմ ընկերութիւնս: Նա Ամերիկայի Բրիտ-
տոսի Եկեղեցիներուն Դաշնակցային Ժողովին նախա-
դահն է: Ատիկա մեծ տիրոջ մըն է, եւ ինք արժանի
է ատոր: Իրապէս նա է որ ճամբան կը հարթէ եւ միւս
քարոզիչները անկէ կը քալեն: Իր կիրակի օրուան
քարոզներէն վերջ՝ նա հարցումներու կը պատասխա-

նէ. եւ այդ պատասխանները նա կուտայ ճիշտ նոյն
պահուն՝ առանց կանխամտածութեան: Նա՛ մեր օր-
ուան դժբախտութիւն գուշակողներուն ողորմելիու-
թիւնը ցոյց կուտայ: Անոր խօսքերը ճիշտ ժամանա-
կի պահանջին համաձայն են: Մեր նաւ առնելէն ա-
ռաջ կիրակի օր մը հարցումներու իր տուած պատաս-
խանները լսեցի: Յաջորդ օրը Նիւ Եորքի թերթերը ա-
նոր ըսածները հրատարակեցին: Հարցումներէն մին
ու անոր պատասխանը այնքան ուշադրութիւնս դըս-
ւեցին որ կտրեցի ու պահեցի զանոնք: Չմոռնամ ըսե-
լու որ ան ահա քովս է: Կարդամ ու մտիկ ըրէ.

«Հարցում. — Կը հաւատա՞ք թէ մենք վերջին օ-
րերուն մէջ կ'ապրինք, եւ բաւականաչափ ապացոյց-
ներ ունի՞ք որ մեզի ցոյց տան թէ Տիրոջ գալուստը
մօտեցած է, նոյն իսկ դռներուն քով:

«Պատասխան. — Ո՛չ, նշանները ատոր հակառակը
ցոյց կուտան: Մենք չենք ուղեր որ Տէրը դեռ հոս
գայ: Մեզի պէտք եղած բանը այն է որ աշխարհը
յարմար վիճակի մը մէջ գտնուի Անոր գալուն հա-
մար: Փոխանակ երկնակամարին նայելու եւ հարցը-
նելու թէ Նա երբ պիտի գայ, պէտք է դորժի ձեռ-
նարկենք եւ երկիրս մաքրագործենք՝ Անոր հասնե-
լուն որպէս նախապատրաստութիւն: ... Աւելի եւս,
այս երկիրը դեռ բաւականին երիտասարդ մոլորակ
մըն է: Եկէ՛ք ու մարդկային բարոյական ձեռնարկու-
թիւններով դայն Աստուծոյ փառքովը զգեստաւո-
րենք, եւ ահա այդ ատեն է որ կրնայ Քրիստոս գալ»:
Զ՛էք խորհիր թէ ասիկա խիստ պատշաճ ու ճար-
պիկ պատասխան մըն է:

Տէյվլիտ. — Ո՛չ. Կը խորհիմ թէ անոր տուած պա-
տասխանը մեծաւ մասամբ ոչնչարանութիւն է:

Միտնի. — Ի՞նչ կ'ըսես, մա՛րդ. ի՞նչ ըսել կ'ուզես
ոչնչարանութիւն ըսելով: Ըսէ՛ նայիմ, արդեօք դուն
քարոզի՞չ մըն ես:

Տէյվիտ.— Ո՛չ, քու կարծած տեսակէդ քարոզիչ մը չեմ: Ես պարզ մարդ մըն եմ միայն: Բայց ես դիտեմ թէ անոր տուած պատասխանը մեծ մասամբ օղային երեւակայութիւն մըն է: Հարցը լուրջ եւ խիստ ժամանակաշարմար հարց մըն է: Անոր ուղիղ պատասխանը պէտք է կանգ առնել ու նկատել տայ ամէն անոնց որ ըմբռնելու կարողութիւնն ունին: Տքթ. Քէտմընը կը յայտարարէ քարոզիչ մը եւ Աստուածաշունչը քարոզող մ'ըլլալ, այնպէս չէ՞:

Սիտնի.— Սյո՛, անշուշտ: Նա Աստուածաշունչը ծայրէ ծայր գիտէ:

Տէյվիտ.— Շատ լաւ. եթէ այդպէս է նա պարտի ճշմարտութիւնը խօսիլ ժողովուրդին:

Սիտնի.— Ի՛նչ. արդեօք նա ճշմարտութիւնը չի՞ քարոզեր ժողովուրդին:

Տէյվիտ.— Ո՛չ, եթէ իր այդ տուած պատասխանէն պիտի դատենք: Ես գիտեմ թէ Աստուածաշունչը ինչ կ'ըսէ այս խնդիրներուն մասին, եւ Աստուածաշունչը ճշմարտութիւն է:

Սիտնի.— Օ՛, դու զիս կը հետաքրքրես: Եթէ Տքթ. Քէտմընի տուածէն աւելի լաւ պատասխան մը ունիս՝ ես կ'ուզեմ լսել:

Տէյվիտ.— Ա՛յ սիրելիս, դուն այսօր այնքան բան տեսար որ՝ եթէ գանոնք Ս. Գրոց լոյսովը նկատի առնես՝ պիտի կրնաս Տքթ. Քէտմընի տուածէն աւելի լաւ պատասխան մը տալ:

Սիտնի.— Յայտնէ թէ ինչ ըսել կ'ուզես: Կը փափաքեմ քու պատասխանդ լսել այդ հարցման մասին:

Տէյվիտ.— Իրապէս կը փափաքե՞ս որ քեզի յայտնեմ թէ Աստուածաշունչը ինչ կ'ըսէ եւ թէ մեր երկուքին գիտցած իրողութիւնները որքան գեղեցիկ կերպով Աստուածաշունչի փաստերը կը հաստատեն:

Սիտնի.— Անշուշտ կը փափաքեմ: Իմ հայրս քարոզիչ մըն էր եւ նա ուղեց որ ես ալ քարոզիչ մ'ըլլամ

բայց ես շատ կարեւորութիւն չտուի ատոր: Սակայն՝ Աստուածաշունչի խօսքերէն քիչ թէ շատ տեղեկութիւն ունիմ. եւ քու ըսելիքներդ խիստ հետաքրքրութեամբ մտիկ պիտի ընեմ: Մի քիչ թեթեւ ուտելիք ու խմելիք ալ ազսպրեմ որ վայելենք՝ մինչ դուն կը խօսիս ու ես ալ մտիկ կ'ընեմ:

Տէյվիտ.— Նախ գիտցած եղեր որ ես Տքթ. Քէտմընի անձին դէմ ոեւէ տեսլութիւն չունիմ: Հարցումը հրապարակաւ եղած էր, պատասխանն ալ հրապարակաւ տրուած եւ յետոյ բովանդակ աշխարհի մէջ հեռարձակուած էր: Այդ պարագաները իրաւասութիւն կուտան խնդիրը հրապարակաւ նկատողութեան առնելու:

Միլիոնաւոր մարդիկ այդ հարցով հետաքրքրուած են: Իրողութիւնն այն է որ այդ հարցումը դարերով խոհուն մարդոց ուշադրութիւնը գրաւած է: Ատիկա Ս. Գրոց հարց մըն է եւ ատոր հետ մեծ մասամբ կապակցութիւն ունին Ս. Գրոց մարդաբանական խօսքերը: Ուրեմն, որպէս զի պատասխանը ուղիղ ըլլայ՝ ան պէտք է հաստատուի Ս. Գրոց վրայ, ինչպէս նաեւ այն շօշափելի իրողութեանց վրայ՝ որոնք Ս. Գրոց հետ համաձայն են: Թէ որ պատասխանը ամբողջովին մարդկային իմաստութեան վրայ հիմնուած ըլլայ՝ այն ժամանակ ան արժէք մը պիտի չի ներկայացնէ՝ ինչու որ պարզապէս կարծիքի արտայայտութիւն մը պիտի ըլլայ: Ս. Գիրքը կը յայտարարէ թէ մարդոց իմաստութիւնը Աստուծոյ առջեւ յիմարութիւն է— Ա. Կորնթ. Ա. 20:

Տքթ. Քէտմընի պատասխանը մարդկային իմաստութեան արտայայտութիւն մըն է միայն: Անոր իմաստութիւնը Ս. Գրոց վրայ բնաւ չէ հիմնուած: Ահա այդ է պատճառը որ կը հակառակիմ անոր: Ժողովուրդը իրաւունք ունի լսելու այն պատասխանը որ Ս. Գրոց վրայ հիմնուած է: Քանի որ դուն ինձմէ կը

խնդրես ատոր մասին իմ խորհուրդս յայտնել՝ ես քեզի պիտի տամ այն պատասխանը որ Ս. Գրոց վրայ հիմնուած է: Գանի որ դուն Ս. Գրոց խօսքերուն ծանօթ եւ աշխարհի պատմութեան տեղեակ ես՝ պիտի կրնաս դիւրութեամբ վճռել թէ իմ պատասխանս տըրամաբանական եւ ուղիղ է թէ ոչ:

ՎԵՐՁԻՆ ՕՐԵՐ

Որպէս զի կարենանք վճռել թէ վերջին օրերուն մէջ կ'ապրինք թէ ոչ՝ պէտք է որ նախ ստուգենք թէ ինչ է «վերջին օրեր» բառերուն նշանակութիւնը: «Վերջին օրեր» բառերուն մէկէ աւելի անգամներ կը հանդիպինք Աստուածաշունչին մէջ: Ատոնք կ'ախարհկեն Ազգերու (կամ Հեթանոսաց) ժամանակներուն վերջին մասին, այս աշխարհի վախճանին՝ որուն աստուածը Սատանան է, եւ Քրիստոսի երկրորդ դալուստին: Ս. Գրոց մէջ գործածուած օր կամ օրեր բառերը քանրչորս ժամուան օր կամ այդպիսի մի քանի օրեր չեն նշանակեր: Անոնք կանխորոշ ժամանակաշրջան մը կը ներկայացնեն: Ս. Գիրքը «Նոյի օրեր»ուն մասին կը խօսի, եւ Յիսուս այդ բառերը գործածեց իր երկրորդ դալուստին մասին խօսած ատեն (Մատթ. ԻԴ. 37): Նոյ երկար տարիներ տալով տապանը շինեց եւ աշխարհի վախճանին մասին քարոզեց ժողովուրդին: Ս. Գրոց մարգարէութիւնները վերջին օրերուն վրայ կը կեդրոնանան, երբ ատոնց իրականացումը պէտք է ակնկալենք:

Մարգարէութիւն կը նշանակէ արագային տեղի ունենալիք անցքերը գուշակել: Մարգարէութիւնները Աստուծոմէ միայն կուզան, զորոնք հին ատենուան սուրբ մարդիկը Աստուծոյ հոգիէն շարժուած գրի կ'առնէին (Բ. Պետրոսի Ա. 21): Աստուծոյ մարգարէները վերջին օրերուն մասին մարգարէացան, եւ բոլոր բարեպաշտ Հրէաները ակնկալութեան մէջ էին երբ Յիսուս ծնաւ երկրիս վրայ: Յիսուս իր աշա-

կերտներուն քարոզած էր աշխարհի վախճանին, ու «վերջին օրեր»ուն եւ Մեսիական թագաւորութեան հաստատման մասին: Անոնք մեծապէս հետաքրքրուած էին ատոնցմով: Այդ պատճառաւ անոնք առանձինն Յիսուսի եկան եւ սա հարցումն ըրին Անոր. «Ըսէ մեզի, ե՞րբ պիտի ըլլան այդ բաները. եւ քու դալուստիդ ու աշխարհիս վերջին նշանը ի՞նչ պիտի ըլլայ»— Մատթէոսի ԻԴ. 3:

Այդ հարցման որպէս պատասխան՝ Յիսուս ոեւէ բան չըսաւ երկնակամարին նայելու մասին եւ հարցնելու թէ Նա ե՞րբ պիտի դայ, ինչպէս որ Տըթ. Գէտմըն կ'արտայայտէ խնդիրը: Այդ համբաւաւոր Տաքթըրը Ս. Գրքէն ոեւէ արտօնութիւն կամ ասպոցոյց չի ներկայացներ որ մարդիկ երկնակամարին նային ու հարցնեն թէ երբ պիտի դայ Տէրը: Եւ ոչ ալ ակնկալելու ենք որ Յիսուս այդպիսի խորհուրդ տայ ոեւէ մէկուն: Հարցումն ընողները մարդիկ էին. եւ բնականաբար մենք ակնկալելու ենք որ Յիսուս այդ մարդոց այնպիսի բան մ'ըսէր որ մարդիկ կարող ըլլային հասկնալ՝ իրբւե աշխարհի վախճանին եւ իր երկրորդ անգամ դալուստեան նշանները կամ ասպոցոյցները: Նա անոնց ըսաւ այնպիսի բաներ՝ զորոնք մարդիկ վերջին օրերուն մէջ պիտի կրնային հասկնալ ու նկատողութեան առնել: Երբ մարգարէութեանց իրականացումը ցուցնող շօշափելի իրողութեանց լոյսով Անոր պատասխանը քննութեան ենթարկենք՝ ոեւէ մէկը պիտի կրնայ ըմբռնել այդ պատասխանը:

ԱՇԽԱՐՀ

Նախ լաւ է քիչ մը լուսարանութիւն ստանանք աշխարհի վախճանին կամ վերջն աշխարհի մասին, ինչու որ այդ ժամանակաշրջանը եւ «վերջին օրեր»ը միեւնոյն ատեն կը պատահին: Սատանան այս աշխարհի աստուածը (կամ աներեւոյթ իշխանը) եղած է անոր սկիզբէն ի վեր: Մի միայն Իսրայելի ազգն էր

որ բացառութիւն կը կազմէր: Այդ ազգին հետ Աստուած ուխտ մ'ըրաւ, եւ անոնք Անոր ընտրեալ ժողովուրդն էին՝ մինչեւ որ անոնք շարունակաբար ոտքի տակ առին այդ ուխտը: Յետոյ Աստուած թոյլ տուաւ որ Իսրայէլացիները դերի տարուին եւ Հեթանոսները կամ ոչ-Հրէաները առանց արգելքի աշխարհի վրայ իշխեն որոշ ժամանակաշրջան մը: Այդ ժամանակ Սատանան ամբողջ աշխարհի աստուածն էր: Յիսուս երկրիս վրայ եղած ատեն ընդունեց թէ Սատանան էր այս աշխարհի իշխանը:

Բանտարկուն Յիսուսի ըսաւ թէ՛ աշխարհիս բոլոր թագաւորութիւնները իրեն կը պատկանին եւ առաջարկեց զանոնք Յիսուսի տալ կարգ մը պայմաններով (Մատթ. Դ. 8, 9): Յիսուս այն ատեն չ'ուրացաւ Սատանային իշխանական գորութիւն ունենալը: Վերջէն Նա ըսաւ Իր աշակերտներուն— «Հիմա այս աշխարհին իշխանը դուրս պիտի ձգուի (Յովհաննու ԺԲ. 31): Որպէս ուրիշ ապացոյց թէ Յիսուս Սատանան այս աշխարհի աստուածը կը նկատէր՝ Պիղատոսի առջեւ կանգնած ատեն ըսաւ, «Իմ թագաւորութիւնս այս աշխարհէն չէ. եթէ այս աշխարհէն ըլլար իմ թագաւորութիւնս, իմ սպասաւորներս կը կըռուէին՝ որպէս զի ես Հրէից ձեռքը չմատնուիմ, բայց հիմա իմ թագաւորութիւնս ասկէ չէ», ներկայիս չէ հապա ապագային (Յովհ. ԺԸ. 36): Նախ Սատանայի իշխանութեան «վերջին օրեր»ը պէտք որ դան:

Ասկէ այն պէտք է հասկնանք որ՝ թէեւ Յիսուս սահմանուած էր թագաւոր ըլլալու, սակայն Իր թագաւորութիւնը առնելու ժամանակը հասած չէր դեռ, հապա մինչեւ Իր թագաւորութեան հաստատուիլը պէտք էր որ երկար ատեն սպասէր: Յիսուսի յարութիւն առած եւ երկինք համբարձած ատեն Աստուած ըսաւ Անոր— «Նստէ իմ աջ կողմս, մինչեւ ջու թրջնամ ինեքդ ոտքերուդ պատուանդան ընեմ» (Մաղմո-

սաց ձժ. 1): Ուրիշ խօսքով՝ «Սատանային իշխանութեան արգելք մի հանդիսանար մինչեւ որ դայն վար առնելու ժամանակը չհասնի»: Ուստի այդ պիտի նըշանակէ թէ երբ ժամանակը հասնի՝ Սատանան արտաքսուելու համար դործողութեան պիտի ձեռնարկուի: Ատիկա պիտի նշանակէ նմանապէս թէ Սատանան արտաքսուելու համար դործողութեան պիտի չի ձեռնարկուի մինչեւ որ Տէրը երկրորդ անգամ չգայ:

Պօղոս առաքեալ Բ. Կորնթացիս Դ. 3, 4-ով բացայայտօրէն կը յայտարարէ թէ այս աշխարհիս աստուածը Սատանան է: Սատանան հոգեղէն էակ մըն է. հետեւաբար նա անտեսանելի է, սակայն նա իր գորութիւնն ի գործ կը դնէ երկրիս ազգերուն ու ժողովուրդներուն վրայ, ու ատոր համար նա աստուած կամ իշխան կոչուած է: Աշխարհ կը նշանակէ անբեւոյթ իշխանի մը հսկողութեան տակ՝ որպէս կառավարութիւն կազմակերպուած երկրիս ժողովուրդները, ու այդ իշխանը երկար ատենէ ի վեր է որ Սատանան եղած է: Հետեւաբար «վերջին օրեր»ը կ'ակնարկեն այն ժամանակաշրջանին երբ Տէր Յիսուս կ'սկսի Սատանայէն դէմ դործողութեան ձեռնարկել՝ դայն արտաքսելու եւ Ի'ր թագաւորութիւնը վառաւորապէս հաստատուելու համար:

ԱՆՈՐ ԳԱԼՍՏԵԱՆ ԿԵՐՊԸ

Յիսուս ըսաւ թէ Ինք պիտի դայ ու Իր մարմինը ցոյց տայ երկրիս ժողովուրդներուն: Նա հոգեղէն է եւ մարդկային աչքը չկրնար հոգեղէն էակ մը տեսնել: Սակայն եւ այնպէս որոշեալ ատենին Նա Իր գորութիւնը ցոյց պիտի տայ որպէս զի բոլոր մարդկային աչքերը Իր ներկայութիւնը կարենան տեսնել կամ ըմբռնել: Նա վաղակիւր Իր դալուն կերպին որպէս պատկեր դործածեց: Նա ըսաւ. Ինչպէս որ ան «արեւելքէն կ'ելլէ ու մինչեւ արեւմուտք կ'երեւնայ, այն-

պէս պիտի ըլլայ Որդւոյ մարդոյ դալուստը» (Մատթէոսի ԻԴ. 27)։ Յիսուսի զօրութիւնը անսահման է. եւ Նա կրնայ այդ զօրութիւնը Իր երկնային աթոռէն այնքան լաւ կերպով դործածել որքան որ պիտի կըրնար թէ որ երկրի վրայ եղած ըլլար։

Յիսուսի երկինք համբարձած ժամանակէն ի վեր բազմաթիւ դարեր մեծ խաւար մը պատած է երկիրը։ Վերջին տարիներս մեծ գիւտեր երեւան եկած եւ մարդիկ աւելի քան երբէք ողբի ի բռին կը պայքարին իրենց իրաւունքներուն համար։ Ասիկա անոր համար է որ՝ Տէրը աւելի մեծ լոյս կը սփռէ։ Աստուած Իր Դանիէլ մարգարէին ըսաւ. «Եւ դուն, ով Դանիէլ, այս խօսքերը գոցէ, ու գիրքը կնքէ մինչեւ վերջին ժամանակը. շատերը հոս հոն պիտի պտըտին, ու գիտութիւնը պիտի շատնայ։ . . . Եւ անիկա ըսաւ, Գնա, ով Դանիէլ, քանզի այս խօսքերը մինչեւ վերջին ժամանակը գոցուած եւ կնքուած են։ Շատերը պիտի մաքրուին ու պիտի ճերմկնան ու պիտի փորձուին, բայց ամբարիշտները ամբարշտութիւն պիտի ընեն. ու բնաւ ամբարիշտ մը պիտի չհասկնայ, հապա իմաստունները պիտի հասկնան» — Դան. ԺԲ. 4, 9, 10։

Մը. Սիտնի, դուն երեւելի դերդաստանի մը սերունդն ես։ Քու նախահայրերդ խիստ ուսեալ մարդիկ էին։ Բայց արդեօք քու մեծ հայրդ ոեւէ տեղեկութիւն ունէ՞ր ովկիանոսի վրայ երթեւեկող այն հսկայ շոգենաւներէն՝ որոնց մէկուն միջոցաւ ներկայիս կը ճամբորդենք։ Արդեօք նա երբէք առանձնաշորհն ունեցա՞ւ ճամբորդելու՝ երկաթուղիի կառախումբով մը որ ժամը իննսուն մղոն արագութեամբ կը սուրայ։ Արդեօք նա հաճոյքն ունեցա՞ւ անձնական ինքնաշարժով մը երկրիս այս ու այն կողմը վաղելու։ Արդեօք նա երբէք երագե՞ց թռչող մեքենայի մը մասին։ Նա ի՞նչ պիտի խորհէր՝ թէ որ այս առտու նաւուն վրայ կանդնած ըլլար եւ օդանա-

ւուն վար գալը ու ճամբորդները պարպելը տեսնէր։ Դուն ներկայիս Անգլիոյ մէջ կը ճանչնա՞ս մարդ մը որ քու մեծ հօրդ հօրմէն աւելի ուսեալ ըլլայ։ Ուրեմն ինչո՞ւ համար այս հիանալի գիւտերը իր օրուան մէջ երեւան չեկան։ Ինչո՞ւ համար փոխադրութեան այս բոլոր արագ միջոցները անցեալ կէս դարուն մէջ է որ ի լոյս եկած են։ Ատոնց համար ի՞նչ բանաւոր պատճառ կրնաս գտնել։ Անշուշտ ատոնք մեր օրուան մարդոց մեծագոյն իմաստութեան արդիւնքը չեն։ Ուրեմն ի՞նչ է բանաւոր պատասխանը։

Աստուծոյ մարգարէն, որուն խօսքերը քիչ առաջ մէջ բերի, պատասխանը կուտայ, այսինքն՝ «Վերջին ժամանակն է»։ Մարգարէն ըսաւ թէ մեր վերջին ժամանակին կամ վերջին օրերուն հասած ըլլալուն որպէս ապացոյց՝ շատերը հոս հոն պիտի պտըտին եւ գիտութիւնը մեծապէս պիտի աճի։ Նկատի առնելու ենք որ, նա չըսեր թէ իմպատութիւնը պիտի շատնայ, հապա մարդիկ գիտութիւն եւ ծանօթութիւն պիտի ստանան Աստուծոյ վաղուց ի վեր պատրաստած փրկութեան ծրագրի մասին։

Երբ այս առաւօտ օդանաւով օդին մէջ էի՝ քեզի անթել պատգամ մը ղրկեցի, եւ դուն կը խորհի՞ս թէ մարդն է որ յառաջ բերած է այդ մեծ զօրութիւնը։ Իրողութիւնն այն է որ Աստուած երեք հազար տարի առաջ Իր մարգարէին միջոցաւ գուշակեց անթելի դործածութիւնը։ Գրուած է. «Կայծակները կրնա՞ս ղրկել, որպէս զի երթան, ու քեզի՝ Ահա պատրաստ ենք՝ ըսեն» (Յորայ ԼԸ. 35)։ Արդեօք այս առաւօտ իրապէս այդ բանը չէ՞ր որ ըրի քեզի՝ քեզ կարենալ տեսնելէս երկար ատեն առաջ։ Եւ մեր կայծակի զօրութիւն կոչած բանը չէ՞ր որ այդ պատգամը քեզի բերաւ։

Աստուած դարեր առաջ Իր մարգարէին միջոցաւ օդանաւն ալ գուշակեց սա բառերով. «Ո՞վ են ասոնք՝

որ կը թռչին ամսի պէս, ու ղէսի իրենց վանդակը թռչող աղանիներու պէս» — Եսայեայ 4. 8:

Դանիէլ մարգարէն, որուն խօսքերը քու առջեւ դրի, յայտնեց թէ արագ ճամբորդութեան եւ հեռաւոր հաղորդակցութեան միջոցները ու գիտութեան մեծապէս շատնալը մեր վերջին ժամանակուան կամ վերջին օրերուն մէջ եղած ըլլալուն ապացոյցներ են: Արդեօք մարդիկ պարտաւոր են այս բաները տեսնել կարենալու համար անտարբերութեամբ երկնակամարին նայելու: Անշուշտ ոչ: Աստուած մարդոց ուղեղ տուաւ խորհելու եւ տրամաբանելու համար: Անոնք միայն պիտի կրնան հասկնալ՝ որոնք որ զԱստուած կը հաճեցնեն, Աստուծոյ ստեղծագործութեան այս սքանչելի բաները նկատի առնելու համար իրենց ուղեղը կը գործածեն ու կը ջանան Աստուծոյ կամքին ծանօթանալ եւ հնազանդիլ:

Բայց ենթադրենք թէ ժողովուրդին մէջ մեծ համբաւ ունեցող, ուսեալ եւ երեւելի մարդ մը կայ որ կը սիրէ մարդոցմէ փառաբանուիլ: Այդ մարդը հպարտ է, այնպէս չէ՞: Աստուած կը խորշի հպարտութենէն, եւ նա պիտի չթոյլատրէ որ հպարտները հասկնան Իր Սօսքը (Առակաց Ը. 13, ԺՁ. 18): Անոնք միայն պիտի կրնան Տէրը հասկնալ որ Անկէ կ'ակնածին եւ Անոր կը հնազանդին: Տէրը կ'ըսէ թէ «Վերջին օրեր»ուն մասին գրուած այս բաները «ամբարիշտները պիտի չհասկնան»: Ս. Գրոց առումով՝ ամբարիշտները անպատճառ գէշ սովորութիւններ ունեցող մարդիկը չեն: Անոնց սովորութիւնները կըրնան լաւ ըլլալ եւ բարոյապէս ու մտաւորապէս բարձր դիրք մ'ունենալ: Սակայն հպարտ, գոռոզ ու ամբարտաւան մարդիկ Ս. Գրոց առումով ամբարիշտներ են, ինչու որ Աստուած կ'ատէ այդպիսիները: «Ամբարիշտը իր երեսին ամբարտաւանութեանը համար զԱստուած չփնտռեր. բոլորովին անոր մտքին

մէջ Աստուած չկայ» (Մաղժոսաց Ժ. 4): Ահա ատոր համար է որ Անձ կարծուած եւ կոչուած մարդիկը Աստուծոյ Սօսքը բնաւ չեն հասկնար:

88-48981

Երբ առաւօտը հասնի՝ կ'ըսենք թէ արեւը վեր կը բարձրանայ, օրը սկսած է: Լոյսին երեւնալն է որ այդ տեսակ արտայայտութիւններու առիթ կուտայ: Այդպէս ալ պիտի ըլլայ մեր Տիրոջ երկրորդ գալստեան ատեն: Տիրոջ Սօսքին նուիրուողներուն մեծագոյն լոյս երեւնալն ու հասկցուիլն է որ կ'օգնէ անոնց ըմբռնելու այն ժամանակաշրջանը որուն մէջ կ'ապրինք: Երկրիս ժողովուրդներն ընդհանրապէս մեծ խաւարի կամ տգիտութեան մէջ կը գտնուին Տիրոջ եւ Անոր երկրորդ գալստեան մասին: Ատոր համար է որ անոնք հարցումներ կ'ընեն: Անոնք կ'ուզեն լոյս ստանալ: Յայտնի է թէ քարոզիչներն ալ նմանապէս խաւարի մէջ են, ապա թէ ոչ անոնք Ս. Գրոց լոյսովը պատասխան պիտի տային:

Յիսուս ուրիշ պատկեր մըն ալ գործածեց՝ ըսելով թէ Ինք գեշերուան դողի մը պէս պիտի գայ: Գոլը սովորաբար մութ ժամանակ եւ մարդոց քնացած ատենը կուգայ: Ատիկա գեղեցիկ կերպով ցոյց կուտայ թէ՛ Տիրոջը գալուտը եւ վերջին օրերը այնպիսի ատեն մը կը պատահին երբ մարդիկ ընդհանրապէս տգիտութեան մէջ են այդ իրողութեանց մասին. եւ ի հարկէ խաւարի մէջ պիտի ըլլան այն կղերներն ալ որոնք իրենց անձերը Աստուծմէ աւելի կը սիրեն: Այժմ յառաջ անցնինք ուրիշ ապացոյցներ կամ նշաններ նկատողութեան առնելու համար:

ՆՇԱՆՆԵՐ

Ս. Գրոց առումով՝ «նշան» բառը ապացոյց կը նշանակէ: Արդ, եթէ Տէրը յանկարծակի պիտի գայ եւ բոլոր մարդոց աչքերուն պիտի երեւնայ՝ այն ժամանակ Ինչ հարկ կայ ռեւէ նշան կամ ապացոյց վերն-



տուելու: Երբ ուղղակի մարդու մը կը նայիս՝ անոր քեզի մօտ ըլլալուն մասին ուեէ ապացոյցի պէտք չունիս: Ակներեւարար, «նշաններ»ը կամ ապացոյցները, ուրեմն անոր համար կը տրուին՝ որ մեզի յայտնեն թէ մենք կ'ապրինք վերջին օրերուն ու այն ժամանակուան մէջ՝ երբ Տէրը Իր զօրութիւնը ցոյց կուտայ: Յիսուսի տուած պատասխանը քննութեան առնելէ առաջ՝ ուշադրութիւննիս դարձնենք մի քանի մարդարէութիւններու վրայ, որուն շնորհիւ կարող պիտի ըլլանք մարդարէութեանց իրականացումը ցուցնող իրողութիւններն ըմբռնել:

Իսրայէլի վերջին թագաւորը Ք. Ա. 606-ին գահընկէց եղաւ: Աստուած առաջուց յայտներ էր թէ Ազգերու ժամանակները եօթը խորհրդաբանական ժամանակներու, կամ 2520 տարիներու շրջան մը պիտի ըլլան: Այդ շրջանը ի հարկէ 1914-ին պիտի վերջանար, ինչու որ (Ք. Ա.) 606 եւ (Ք. թ.) 1914 միասին կ'ընեն 2520 տարի: Թէ որ այս եզրակացութիւնը ուղիղ է՝ ուրեմն 1914-ին աշխարհի վախճանը եւ Տիւրօջ զալուստը ցուցնող ապացոյց մը տեսնելու ենք:

Այժմ նկատի առնենք այն պատասխանը՝ զոր Յիսուս տուաւ Իրեն ուղղուած հարցման: Նա ըսաւ. «Ազգ ազգի վրայ պիտի ելլէ, ու թագաւորութիւն թագաւորութեան վրայ, եւ տեղ տեղ սովեր ու մահատարածամներ (համաճարակներ) եւ երկրաշարժութիւններ պիտի ըլլան: Բայց ասոնք ամէնը ցաւերուն սկիզբն են»— Մատթ. ԻԴ. 7, 8:

Ձիշղ ժամանակին՝ 1914-ին Համաշխարհային Պատերազմն սկսաւ: Ատկէ առաջ բնաւ չէր եղած համաշխարհային պատերազմ մը՝ որ ազգ ազգի դէմ ելլէր եւ պատերազմի մասնակցող ազգերու բոլոր տարրերէն պահանջուէր որ իրենց բաժինը կատարեն: Երկրիս այլեւայլ մասերուն մէջ՝ պատերազմին յաջորդեց մեծ սովեր ու համաճարակներ, որպիսին էր

**ՈԳԵՀԱՐՅՈՒԹԻՒՆԸ
ՍՍՏԱՆԱՅԱԿԱՆ ԱՐՈՒԵՍ ՄԸՆ Է**

Համաշխարհային Մեծ Պատերազմէն, Ինֆլուէնցայ-էն եւ տեղահանութիւններէն ի վեր՝ ոգեհարցութեան, վհուկութեան, տեսիլներու, եւայլընի միջոցաւ՝ չար հրեշտակները թէ՛ Հայոց եւ թէ՛ բոլոր ազգաց մէջ դրեթէ անթիւ ու անտանելի տառապանքներ բերած են:

Վերոյիշեալ սատանայական արուեստներուն կեղծիքը, եւ ատոնց ծուղակներէն ազատելու միակ ճամբան ցոյց տրուած է՝ մեր «ՈԳԵՀԱՐՅՈՒԹԻՒՆԸ ՍՍՏԱՆԱՅԱԿԱՆ ԱՐՈՒԵՍ ՄԸՆ Է» 64 էջոց զբըքոյկին մէջ: Ամէն խոհուն Հայ պէտք է որ կարգայ այս գրքոյկը, եթէ կ'ողէ գտնել իր շատ մը ցաւերուն իրական դարմանը: Գինն է 10 սէնթ:

ԹՍՏԵՐԱՆԿԱՐՔ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՊԱՏ-ԿԵՐԱՏՐԱՄԻ.— 370 պատկերներով զարդարուած եղակի գիրք մը: 195 էջոց. լաթակազմին գինն է 85 սէնթ, իսկ թղթակազմինը 35 սէնթ:

ԱՍՏՈՒԾՈՅ ԾՐԱԳԻՐԸ.— Խիստ պատուական հատոր մը: Լաթակազմ, 532 էջոց. գինն է 35 սէնթ:

ՈՒՐ ԵՆ ՄԵՌԵԱՆՆԵՐԸ.— 64 էջոց. գին 10փ:

ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԴՐՕՇԱԿԸ.— Էջ 64. գին 10փ:

ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆԵՐՈՒՆ ԱՉՍՏՈՒԹԻՒՆԸ.— Տառապող ժողովուրդներուն բարեկամը: Էջ 64. գին 5փ:

Նամակ կամ դրամ ղրկուելու է ԴԻՏԱՐԱՆ-ի անուան եւ հասցէին, որ հետեւեալն է՝

THE TIDARAN
117 Adams Street, Brooklyn, N. Y., U. S. A.

Սպանական Ինֆլուէնցան, որ աւելի մարդ մեռցուց քան թէ Համաշխարհային Պատերազմը: 1914-էն ի վեր աւելի երկրաշարժներ եղած են քան անկէ առաջ ուրիշ ոեւէ ատեն: Յիսուս ըսաւ թէ ասոնք Սատանայի աշխարհին վրայ գալիք ցաւերուն սկիզբը պիտի նշանակեն: Երկրիս վրայ ասորոզ ու տրամաբանելու կարող եղող ամէն մարդ տեսած է այս ապացոյցները կամ նշանները: Եթէ ատոնք սկիզբն են՝ ատիկա կը նշանակէ թէ գալիք ուրիշ բաներ ալ կան որոնք շատ աւելի մեծ ցաւեր պիտի պատճառեն:

Յիսուս ըսաւ թէ «վերջին օրեր»ուն մէջ՝ Իր ճշմարիտ հետեւողները պիտի հալածուին, նեղութեան մատնուին եւ սպաննուին ու Իր անուանը համար բոլոր ազգերէն ատուին: Համաշխարհային Պատերազմի տեւողութեան բոլոր ճշմարիտ Գրիստոնեաները ատուեցան, հոգ չէ թէ անոնք Գերմանիոյ թէ Անգլիոյ ու անոր դաշնակիցներուն հողերուն վրայ դտնուած ըլլային: Ամէն անոնք որ Սբ. Գրոց վրայ հիմնուած իրենց խղճին հակառակ կը նկատէին իրենց ընկեր արարածներն սպաննել՝ ոչ միայն ատուեցան հասլա նաեւ հալածուեցան, ծեծուեցան, բանտը նետուեցան եւ ոմանք ալ սպաննուեցան:

Յիսուս որպէս ուրիշ նշան կամ ապացոյց յայտնեց թէ Հրեաները ոտքի կոխան պիտի ըլլային մինչեւ Ազգերու Ժամանակներուն վախճանը, որմէ վերջ Աստուծոյ շնորհը պիտի սկսէր զանոնք իրենց երկիրը վերադարձնել: Ամէն ոք զիտէ թէ 1918-ին էր որ Հրեաները Պաղեստինի մէջ վերահաստատուելու շարժումը մեծ զարկ մ'ստացաւ: Հրեաները Պաղեստինը վերաշինելու ետեւէ են: Ատիկա զօրաւոր նշան մը կամ ապացոյց մըն է:

Որպէս մի ուրիշ նշան կամ ապացոյց՝ Յիսուս ըսաւ. «Երկրի վրայ ազգերը ասլուութեամբ պիտի տաղանային, եւ ծովը ու արիւնները պիտի դոռան».

մարդոց սիրտերը պիտի նուաղին իրենց վախէն եւ աշխարհի վրայ դալու բաներուն սպասելէն» (Ղուկասու ԻԱ. 25, 26): Անշուշտ ներկայիս բոլորն ալ կը տեսնեն այս նշանները: Բոլոր ազգերը վախի մէջ են:

Համաշխարհային Պատերազմը 1918-ին յանկարծ կանգ առաւ: Եւ ի՞նչ պատճառաւ: Տէր Յիսուս կը յայտնէ թէ պատճառը այն էր որ այնուհետեւ թագաւորութեան աւետարանը քարոզուի բոլոր ազգերուն վկայութեան համար (Մատթ. ԻԳ. 14): Աւետարանը ուրախ լուրեր կը նշանակէ: Գանի որ շօշափելի իրողութիւնները ցոյց կուտան թէ վերջին օրերուն մէջ կ'ապրինք՝ ուրեմն այդ ժամանակէն սկսեալ ուրախ լուրերը բոլոր ազգերուն պէտք է յայտարարուին վկայութեան համար: Այդ բանը ընդունել կը դտնուի՞ն: Կը պատասխանենք՝ Այո՛: Ս. Գիրք Ուսանողները այս պատգամը բովանդակ աշխարհի մէջ կը յայտարարեն ազգերու եւ ժողովուրդներու զանազան լեզուներովը: Անոնք այդ բանը ընկնուն համար մասնաւոր պատուի արժանի չեն համարել ինքզինքնին. հասլա այդ առանձնաշնորհովը կը հրճուին: Ժողովուրդները քարոզիչներէն ոեւէ բան չեն լսել Տիրոջ երկրորդ դալուստին մասին: Եւ միւս կողմանէ ալ՝ կղերները հակառակ կը կենան քարոզողներուն: Յիսուս յայտարարեց թէ այդ վկայութիւնը պիտի տըրուի ոչ թէ աշխարհը դարձի բերելու՝ հասլա յաջորդող մեծ նեղութեան ժամանակէն առաջ աշխարհին ազգարարութիւն տալու համար: Բոլոր ազգերը մեծազոյն նեղութեան մը նկատմամբ վախի մէջ են եւ այդ պատճառաւ պատերազմի պատրաստութիւն կը տեսնեն:

Մասնաւորապէս 1914-էն ի վեր՝ Յիսուսի մարդարէական խօսքերուն իրականացումները վճռական ապացոյցներ են թէ «վերջին օրեր»ուն մէջ կ'ապրինք: Գրիստոսի աւետարանին քարոզիչ եւ Գրիստոսի եկե-

ղեցիին անդամ ըլլալ յայտարարող մարդիկ ինչո՞ւ այս նշաններուն կամ ասլացոյցներուն մասին չեն խօսիր ժողովուրդին :

ԾԱՂՐՈՂՆԵՐ

Այժմ ձեր ուշադրութեանը կը յանձնեմ կարգ մը վկայութիւններ՝ որոնք իմ ըրած վերջին հարցմանս կը պատասխանեն : Պետրոս Առաքեալ ներշնչմամբ «վերջին օրեր»ուն եւ Տիրոջ երկրորդ անգամ գալուն մասին կը գրէր : Նա ըսաւ . «Բայց առաջ զայս գիտնաք , որ վերջին օրերը ծաղր ընողներ պիտի գան , որոնք իրենց ցանկութիւններուն համեմատ պիտի քալեն ու պիտի ըսեն , Ու՞ր է անոր գալուն խոստմունքը» — Բ . Պետրոսի Գ . 3-5 :

Արդեօք Տքթ . Քէտմըն Պետրոս Առաքեալին բուն այս մարգարէութիւնը չէ՞ որ կ'իրականացնէ՞ երբ կ'ըսէ թէ Անոր գալուն մասին նշաններ գոյութիւն չունին եւ թէ ամէն ինչ ատոր հակառակը կ'ապացուցանեն : Պետրոս յետոյ կ'աւելցնէ . «Բանդի անոնք (որոնց ուղածը այս է ,) այն բանը մոռցեր են» եւ կամ՝ կամաւորապէս «անտեսեր են» : Անշուշտ այդ երեւելի քարոզիչը աշխարհային տեսակէտէ տղէտ մարդ մը չէ : Ընդհակառակը նա խիստ ուսեալ մէկին է : Բայց պէտք է խոստովանինք թէ՛ նա Ս . Գրոց այդ համարէն տեղեկութիւն չունի . եւ կամ թէ նա կամաւորապէս կ'անտեսէ եւ ժողովուրդէն ծածուկ կը պահէ զայն : Բայց պիտի ըսէք դուք , այդ խօսքերը ինչո՞ւ գրուէին Ս . Գրոց մէջ : Պատասխանս այն է որ առաքեալը ներշնչմամբ եւ մարգարէաբար գրեց :

Աստուած նախատեսեց որ այս վերջին օրերուն՝ իրենց ցանկութիւններուն ետեւէն քալող եւ Տիրոջ ներկայութիւնը ուրացող մարդիկ պիտի ըլլային : Տքթ . Քէտմըն Տիրոջ երկրորդ գալատեան կը փափաքի՞ արդեօք : Նա կը պատասխանէ . «Մենք հիմա կու-

հիմա չենք ուղեր որ Տէրը գայ» : Ահա այդպէսով՝ նա կը յայտնէ իր փափաքը : Տէրը իսկապէս սիրող մը անշուշտ սրտանց պիտի ուղէ գԱնիկա տեսնել ոեւէ ատեն :

ԶՍՐ ԺՍՄԱՆԱԿՆԵՐ

Պօղոս Առաքեալ ալ ներշնչմամբ գրեց «վերջին օրեր»ու մասին Բ . Տիրոջ Գ . 1-5 համարներուն մէջ՝ ըսելով . «Զայս գիտցիր որ վերջին օրերը չար ժամանակներ պիտի գան . վասն զի մարդիկ պիտի ըլլան անձնասէր , արծաթասէր , ամբարտաւան , հպարտ հայհոյիչ , ծնողներու անհնազանդ , ապերախտ , անսուբբ» : Կրնա՞յ ոեւէ մէկը ուրանալ այս համարին նշանակութեամբ այժմ չար ժամանակներու մէջ ըլլալին : Կը բաւէ միայն լրագիրները աչքէ անցնել տեսնելու թէ անոնց սինակները ինչպէս լեցուն են ամէն տեսակ ոճրագործութիւններու տեղեկագրութիւններով եւ թէ ինչպէս ոչ ոք բոլորովին ապահով է : Թերթերը՝ հպարտացող եւ ինքզինքնին Աստուածաշունչի ճշմարտութիւններուն դէմ յայտարարող քարոզիչներու մասին լուրեր կը հրատարակեն ամէն օր : Բնաւ չէ եղած ժամանակ մը՝ երբ մարդիկ այսքան անձնասիրութիւն ցոյց տուած ըլլային : Անոնք անձնասէր , արծաթասէր , ամբարտաւան ու հպարտ են : Առաքեալը կը շարունակէ ըսելով . «Մատնիչ , յանդուգն , գոռոզ , աւելի հեշտասէր քան թէ աստուածասէր . որոնք աստուածաշտուութեան կերպարանքը ունին , բայց անոր զօրութիւնը ուրացած են . եւ դուն անոնցմէ մէկդի կեցիր» :

Նկատի առնենք «աստուածաշտուութեան կերպարանքը ունին , բայց անոր զօրութիւնը ուրացած են» բառերը : Ես կը յայտարարեմ որ եկեղեցական կազմերը այսօր աստուածաշտուութեան ձեւակերպութիւններ կը կատարեն եւ բացայայտօրէն կ'ուրանան Աստուծոյ զօրութիւնը : Անոնք կ'ուրանան՝

մարդուն կատարեալ ստեղծուիլը, անոնք կ'ուրանան մարդուն ինկած ըլլալը. անոնք կ'ուրանան մարդոց փրկութեան համար Քրիստոսի արեան փրկադին մ'ըլլալը, եւ կ'ուրանան Աստուծոյ թաղաւորութիւնը: Ասոնք զօրաւոր ապացոյցներ են թէ «վերջին օրեր»ուն մէջ կ'ապրինք:

ՀԱՅ ՀՈՅՈՂՆԵՐ

Նկատի առնելու ենք որ՝ Պօղոս կ'ըսէ թէ «վերջին օրեր»ուն մէջ ապրելուն նշաններէն մին պիտի ըլլայ նաեւ հայհոյողներու երեւան գալը: Հայհոյողը այն է՝ որ կ'ընդունի թէ՛ մարդ կրնայ ընել այն ինչ որ միայն Աստուած կրնայ ընել: Այդ կը նշանակէ Աստուծոյ խօսքը անպատկառ կերպով գործածել եւ անտես ընել Աստուծոյ նպատակները: Ուստի եթէ տեսնենք որ Եկեղեցիներու Դաշնակցութիւնը, եւ նամանաւանդ կղերները, կը խոստովանին ընել այն՝ ինչ որ Աստուած միայն կրնայ ընել, ատիկա առաքելին խօսքերուն համեմատ հայհոյութիւն պիտի ըլլայ:

Այս առթիւ դարձեալ նկատի առնենք այդ հարցման մասին Տըթ. Քէտմընի ըսածները. «Մենք հիմակուհիմա չենք ուզեր որ Տէրը դայ: Մեզի պէտք եղած բանն է Անոր գալստեան յարմար աշխարհ մը: ... Մենք պէտք է գործի ձեռնարկենք ու երկիրը մաքրագործենք Անոր գալստեան որպէս նախապատրաստութիւն»: Ո՞վ է որ վայրկեան մը խակ պիտի ենթադրէ թէ՛ կղերները եւ անոնց հօտերուն անդամները կըրնան այս ամբարիշտ աշխարհը մաքրագործել: Անոնք ըսին մեզի թէ Համաշխարհային Պատերազմը, աշխարհիս ազատութիւն պիտի շնորհէ, բայց նկատի առնենք բարձրագոյն դասակարգի մէջ դեռ գոյութիւն ունեցած անդամութիւնները: Չոր օրինակ, Միացեալ Նահանգաց մէջ զինարդելութեան օրէնք մը

անցուցին եւ սակայն զինարդելութեան օրէնքը պարտադրելու պաշտօն ունեցող մարդիկը՝ երկրին ուրիշ ուեւէ դասակարգի մարդոցմէ աւելի կը բռնաբարեն այդ օրէնքը: Ժողովուրդին շահերը պաշտպանելու համար պաշտօնեաներ կ'ընտրուին, եւ սակայն ատոնք կաշառակերութեան կը դիմեն եւ ժողովուրդին իրաւունքներուն հակառակ ուրիշ անօրինութիւններ կ'ընեն: Հարկ չկայ որ քեզի յիշեմ այն բազմաթիւ ապացոյցները՝ որոնք այս աշխարհիս մէջ եղած ամբարշտութիւնները ցոյց կուտան, զոր ուեւէ դասակարգի մարդոց համար կարելի չէ մէջտեղէն բուրովին վերցնել:

Այդ հարցման որպէս պատասխան Տըթ. Քէտմընի ըսածներէն դարձեալ մէջ կը բերեմ. «Այս երկիրը դեռ բաւական երիտասարդ մոլորակ մըն է: Եկէք դայն Աստուծոյ փառքովը զղեւտատերները մարդուն բարոյական գործերուն միջոցաւ. ահա՛ այդ ատեն է որ Քրիստոս կրնայ դայ»: Այս երեւելի մարդուն նկատմամբ պատշաճ ամէն յարգանք տածելով հանդերձ, պարտիմ յայտարարել թէ անոր այս խօսքերը մեծապէս հայհոյական են, եւ այժմ փաստ կը ներկայացնեմ այդ բանը ապացուցանելու համար. եւ եթէ ցոյց տրուի թէ ատոնք հայհոյութիւններ են՝ այն ատեն որոշապէս յայտնի պիտի ըլլայ թէ Պօղոս Առաքեալ ահա այդ բանին ալ էր որ կ'ակնարկէր երբ կ'ըսէր թէ վերջին օրերը չար ժամանակներ պիտի դան:

ԱՇԽԱՐՀԸ ԽՍԻՍՐԻ ՄԵՋ

Ինչո՞ւ համար աշխարհիս մէջ այսքան ամբարշտութիւն կայ: Ս. Գիբըրը կը պատասխանէ թէ ատոր պատճառը մեղքն է: Ադամ Աստուծոյ օրէնքը ոտքի տակ առեր էր, եւ ատոր իբր արդիւնք՝ իր բուրը դաւակնեցող մեղքով յղացան ու անօրինութեամբ ծնան (Սաղմ. ԾԱ. 5): Այդ կէտը հաստատելով Պօ-

դոս Առաքեալ կ'ըսէ. «Վասն զի ինչպէս մարդէ մը մեղքը աշխարհ մտաւ, եւ այն մեղքէն մահը, եւ այնպէս ամէն մարդոց վրայ տարածուեցաւ մահը, քանզի ամէնը մեղանչեցին» — Հռովմ. Ե. 12:

Երկրիս ժողովուրդներն ու աղքերը ինչպէ՞ս պիտի կրնան օր մը մեղքէն ազատիլ ու օրհնուիլ: Ս. Գիրքը կը յայտարարէ թէ Աստուած այդ բանին համար նախապատրաստութիւն ըրած է Քրիստոսի միջնոցաւ (Գաղ. Գ. 16, 27-29): Թէ որ Աստուած այդ բանն ըրած չըլլար՝ մարդկային ամբողջ ազգը պիտի ոչնչանար, ինչպէս որ գրուած է. «Վասն զի Աստուած այնպէս սիրեց աշխարհը, մինչեւ իր միածին Որդին տուաւ, որպէս զի ամէն ով որ անոր հաւատայ՝ չկորսուի (չ'ոչնչանայ), հասկա յաւիտեանական կեանք ունենայ» — Յովհաննու Գ. 16:

Յիսուս մեռաւ ու երկինք համբարձաւ իր զոհադործութեան արժանիքը մարդուն ի նպաստ՝ որպէս մեղքի պատարագ ներկայացնելու համար, ինչպէս որ յայտնուած է Եբրայեցիս Թ. 24-ին մէջ: Մինչեւ իր երկրորդ անգամ գալը՝ Նա աշխարհէն իր մարմնոյն անդամները կ'ընտրէ ամբողջական Մեծ Քրիստոսը կազմելու համար: Նա երկրորդ անգամ կուգայ աշխարհը դատելու եւ օրհնելու նպատակաւ: Ասոր մասին Առաքեալը կ'ըսէ. «Վասն զի ինք օր մը սահմանեց, որուն մէջ աշխարհս արդարութեամբ պիտի դատէ այն մարդուն ձեռքով՝ զոր որոշեց, ու ամենուն հաւատացուց (վստահացուց) դանիկա մեռելներէն յարուցանելով» (Գործք Ժ. 31): Դարձեալ առաքեալը կ'ըսէ. Յիսուս Քրիստոս «պիտի դատէ կենդանիները ու մեռեալները իր յայտնուելուն ու թագաւորութեանը ատենը» — Բ. Տիմ. Դ. 1:

Արդեօք Եկեղեցիներու Դաշնակցութիւնը կրնա՞յ այս երկիրը Քրիստոսի դալատեան յարմար վայրի մը վերածել: Եթէ կրնայ՝ ուրեմն այլ եւս ի՞նչ հարկ

կայ Անոր դայուն: Ինչո՞ւ համար Քրիստոս անոնց չթողու որ դործը ամբողջութեամբ իրենք կատարեն եւ ինք ալ երթայ եւ ուրիշ գործով դրադի: Բայց արդեօք Քրիստոսի եկած ժամանակ երկիրը Աստուծոյ փառքովը զգեստաւորուած պիտի ըլլա՞յ՝ իբր արդինք մարդոց բարոյական դործերուն: Ո՞չ. ընդհակառակը, մեծ խաւար, տգիտութիւն եւ ամէն տեսակ ոճիրներ դոյութիւն պիտի ունենան: Տէր Աստուած՝ իրեն մասին վկայող նուիրուածներուն խօսելով կ'ըսէ. «Նչիր, Լուսաւորուէ (փայլէ). քանզի քու լոյսդ եկաւ, ու Տիրոջը փառքը քու վրադ ծագեցաւ: Վասն զի ահա երկիրը խաւար ու աղքերը մտախուղ պիտի ծածկէ. բայց քու վրադ Տէրը պիտի ծագի, եւ անոր փառքը քու վրադ պիտի երեւնայ» (Եսայ. Կ. 1, 2): Ասիկա կը նշանակէ թէ լոյսի մէջ պիտի ըլլան միայն անոնք որ զԱստուած կը սիրեն եւ Անոր կը ծառայեն:

Ս. Գրոց լոյսով դիտելով՝ չօշափելի իրողութիւնները ցոյց կուտան թէ «վերջին օրեր»ուն մէջ կ'ապրինք: Ատոր ամենազօրաւոր ապացոյցներէն մին այն իրողութիւնն է թէ՛ ինքզինքնին Տիրոջ ներկայացուցիչ յայտարարող կղերները Տիրոջ երկրորդ անգամ գալը կը ծաղրեն ու կ'արհամարեն եւ դոռոգաբար կ'ըսեն թէ իրենք են որ երկիրը պիտի պատրաստեն Անոր դալատեան համար:

Սիւնի. — Մր. Տէյվիտ, գիտեմ որ քու ակնարկած չօշափելի իրողութիւնները ճշմարիտ են: Գիտեմ նմանապէս որ քու մէջ բերած Ս. Գրոց համարներդ ալ ճշմարիտ են: Այդ ամէնը ամբողջ խնդիրը խիստ հետաքրքրական կ'ընեն: Գիտես որ Տքթ. Քէտմըն կ'ըսէ թէ այս երկիրը երիտասարդ մոլորակ մըն է, եւ զայն Քրիստոսի համար պատրաստելուն մէջ մարդը մեծ բաժին ունի: Դուն ի՞նչ կը խորհես ատոր մասին:

Տէյվիտ.— Ս. Գրոց արձանագրութիւնը ցոյց կուտայ թէ՛ Աստուած քառասունեւերկու հազար տարուան մէջ երկիրը պատրաստելէն վերջն էր որ մարդը ստեղծեց եւ դայն անոր վրայ հաստատեց, եւ թէ՛ մարդս վեց հազար տարիէ աւելի է որ երկրի վրայ կը դառնուի: Ասիկա ցոյց չտար թէ ան երիտասարդ է, այնպէս չէ՞: Թէ որ կը փափաքես այս կէտին շուրջ Աստուածաշունչին տուած լիակատար բացատրութիւնը ստանալ՝ կը թելադրեմ որ կարդաս Միջազգային Ս. Գիրք Ուսանողաց Միութեան կողմէ հրատարակուած «Թատերանկարը Ստեղծագործութեան Պատկերատրամի» անունով գիրքը:

Սիւսնի.— Բայց անուրանալի իրողութիւն մըն է թէ մարդիկ երկիրը բարեկարգելու ընթացքին մէջ կը դառնուին: Դուն գիտես որ Տ.քթ. Գէտմըն եւ ուրիշ ուսեալ կղերներ կը սորվեցնեն թէ մարդիկ դարեւ ի վեր ինքզինքնին վեր կը բարձրացնեն, եւ թէ՛ անոնք երկիրը Քրիստոսի դալստեան յարմար վայրի մը պիտի վերածեն:

Տէյվիտ.— Ս. Գիրքը այդ կէտն ալ կը պարզաբանէ, եւ ցոյց կուտայ թէ այդ ինքնակոչ իմաստուն մարդիկը սխալ են: Աստուածաշունչը կ'ըսէ թէ սկիզբէն Աստուած երկինքն ու երկիրը ստեղծեց (Ծննդոց Ա. 1). թէ՛ մարդուն պատուէր տրուեցաւ բաղմանալ ու երկիրը լեցնել, եւ թէ՛ առաջին մարդը կատարեալ ստեղծուեցաւ: Ս. Գիրքը ցոյց կուտայ թէ երկիրը ինչպէս պղծուեցաւ եւ թէ՛ ան ինչպէս պիտի մաքրագործուի: Դուն պարտիս խնդիրը Ս. Գրոց լոյսովը եւ շօշափելի իրողութիւններու միջոցաւ դիտել՝ կարենալ հասկնալու համար թէ արդեօք կարելի՞ է երկիրը մարդոց ջանքերովը բարեկարգել: Բառերուն պատշաճ բացատրութիւնը տալով պիտի կրնանք խնդիրը ըմբռնել:

ԵՐԿԻՆՔ ՈՒ ԵՐԿԻՐ

Ս. Գրոց մէջ գործածուած երկիր բառը երկու տարբեր եւ որոշ նշանակութիւն ունի. առաջին եւ բառական նշանակութեամբ կ'ակնարկուի՝ երկրագունդիս որուն վրայ մարդկային ազգը կ'ապրի. ու երկրորդ եւ այլարանական նշանակութեամբ կ'ակնարկուի՝ կազմակերպութեան (կարգուսարք) տեսանելի մասին, որուն մէկ մասը կը կազմէ մարդը եւ որուն հպատակած է մարդկութիւնը:

Երկինք բառը երկու նշանակութիւն ունի. առաջին եւ բառական նշանակութեամբ կ'ակնարկուի՝ Եհովայի ու մաքուր եւ սուրբ հրեշտակներու բնակավայրին. եւ երկրորդով կ'ակնարկուի՝ այն բարի կամ չար անտեսանելի կազմակերպութեան որուն մարդիկ հպատակած են:

Աշխարհը կը բաղկանայ երկինքէ ու երկրէ: Կազմակերպութեան այն անտեսանելի մասը՝ որուն մարդիկ հպատակած են՝ երկինք կոչուած է, իսկ տեսանելի մասը կոչուած է՝ երկիր. եւ երկուքը միասին առնելով՝ խորհրդաբանօրէն աշխարհ կը կոչուին: Այս պատճառաւ՝ աշխարհ բառը պատշաճ բացատրութեամբ կը նշանակէ՝ անտեսանելի գերիշխանի մը եւ անոր ծառաներուն կամ համախոհներուն հսկողութեան տակ՝ իբրեւ զանազան կառավարութիւններ կազմակերպուած մարդկութիւնը:

Ս. Գիրքը զԱստուած կը նկարագրէ որպէս երկնից երկնքի վրայ բազմած: Ատիկա բանաստեղծական արտայայտութիւն մըն է՝ ամէն ստեղծագործութենէ վեր Աստուծոյ ունեցած բարձրութեանը: Անիկա Բարձրեալն է, եւ Անոր նման ուրիշ մը չկայ:

Աստուած նիւթական երկիրը ստեղծեց եւ անոր վրայ դրաւ կատարեալ մարդ մը: Այն Ժամանակ միայն Նդեմը փառաւոր էր: Երկրին բոլոր միւս մասերը թերակատար էին: Անգլերէն քրքուտ իսկ Հայերէն

անիծեալ բառը գործածուած է Եղեմէ դուրս գտնուած երկրին ակնարկելու համար, որ իսկապէս՝ չամբողջացած կամ թերակատար վիճակ մը կը նշանակէ: Կատարեալ մարդ Ադամը եւ անոր կատարեալ կին Եւան կազմեցին խորհրդարանական երկրին սկզբնաւորութիւնը: Անոնք Արուսեակ գերիշխանին հոգատարութեան տակ էին: Արուսեակ՝ իր փառասիրութեամբ՝ աշխարհի մէջ մեղք մտցուց: Ատկէ վերջ անոր անունը Բանասարկու Սատանայի փոխուեցաւ: Ադամ իր մեղանշման պատճառաւ Եղեմէն վաճառուեցաւ թերակատար երկրին մէջ: Արուսեակի ընկերացած էին սուրբ եւ անարատ հրեշտակներ եւ անոնք ալ իր չար կազմակերպութեան մէկ մասը կազմեցին: Գըրուած է. «Եւ եղաւ որ երբ մարդիկ երկրի վրայ շատնալ սկսեցին, ու իրենց աղջիկներ ծնան, Աստուծոյ որդիները մարդոց աղջիկներուն գեղեցիկ ըլլալը տեսնելով՝ ամէն իրենց ընտրածներէն իրենց կիներ կ'առնէին»— Ծննդոց 2. 1, 2:

Մարդկային մարմին ստանձնող եւ մարդկային կիներու հետ զուգաւորող հրեշտակներու սերունդը շատ չար եղաւ. եւ հետեւաբար գրուած է. «Երկիր Աստուծոյ առջեւ ապականեցաւ եւ երկիր անիրաւութեամբ լեցուեցաւ: Եւ Աստուած երկրի վրայ նայեցաւ, եւ ահա ապականած էր, վասն զի երկրի վրայ ամէն մարմին իր ճամբան ապականեր էր: Եւ Աստուած ըսաւ Նոյի, Բոլոր մարմինին վերջը հասած է իմ առջեւ, քանզի երկիրը անոնց միջոցաւ անիրաւութեամբ լեցուեցաւ. եւ ահա ես դանոնք երկրի հետ պիտի աւրեմ»— Ծննդոց 2. 11-13:

Հոս երկիր բառը խորհրդարանօրէն գործածուած է, եւ կը նշանակէ թէ՛ մարդոց տեսանելի կազմակերպութիւնը ապականած էր. եւ Աստուած զայն ունչացնելու Իր մտադրութիւնը կը յայտարարէր: Այդ մտադրութիւնը գլուխ հանելու համար մեծ ջրհեղեղը

ղը զրկուեցաւ: Աստուած արդար Նոյը եւ անոր ընտանիքին անդամները աղատեց՝ ջրհեղեղէն անցնելով դանոնք: Այդպէս, երկրի բնակիչները ոչնչացան: Ջրհեղեղէն վերջ՝ Աստուած ըսաւ Նոյի եւ անոր որդիներուն. «աճեցէք ու շատցէք, ու երկիրը լեցուցէք» (Ծննդոց Թ. 1): Ներկայիս նիւթական երկրիս վրայ գտնուած բոլոր մարդիկը Նոյի սերունդն են. եւ քանի որ Նոյ Ադամի սերունդէն էր, հետեւաբար բոլոր մարդիկ Ադամի սերունդն են:

Մեծ Արարիչ Նհուֆա Աստուածը՝ երկիրը մարդուն բնակութեան համար ստեղծեց ու մարդը անոր վրայ դրաւ: «Երկիրը ես շինեցի, եւ անոր վրայ մարդը ստեղծեցի. երկինքը իմ ձեռքերս տարածեցին, եւ անոր բոլոր զօրքին ես պատուէր տուի: . . . Քանզի այսպէս կ'ըսէ երկինքը ստեղծող Տէրը, այն Աստուածը որ երկիրը կազմեց, զանիկա շինեց եւ հաստատեց, զանիկա պարապ տեղը չստեղծեց, հաստատեց Կուսեան համար կազմեց. Տէրը ես եմ ու ինձմէ զատ ուրիշը չկայ»— Նաայեայ ԽՆ. 12, 18:

Երկիրը բնաւ մարդուն չէր պատկանէր: «Տիրոջն է երկիր ու անոր լիութիւնը» (Մաղմ. ԻԴ. 1): Տիրոջ բարեհաճութիւնն է երկիրը տալ մարդկային աղբին ամէն անոնց՝ որոնք զինք կը սիրեն եւ Իրեն կը հնազանդին: Ուստի գրուած է. «Հեղերը պիտի ժառանգեն երկիրը»: Հեղերը անոնք են որ պատրաստ են սորվելու, որոնք կը ջանան Տիրոջ կամքին տեղեկանալ եւ մեծ փափաք ունին զայն ի գործ դնելու:

Ջրհեղեղէն վերջ՝ Աստուած մարդուն թոյլ տրուաւ որ իր գիտցած ճամբուն հետեւի եւ երկրիս վրայ բաղձալի կառավարութիւն մը հաստատէ՝ եթէ կըրնայ: Աստուած չկաշկանդեց Սատանան, հաստատեց թող տուաւ որ նա իր աղբեցութիւնը բանեցնէ բոլոր այն մարդոց վրայ՝ որոնք որ կուզեն անոր հպատակիլ: Աստուած մարդուն պատեհութիւն տուաւ բարին կամ

չարը ընտրել, եւ անոնցմէ շատեր Սատանայի չար աղբէցութեան անձնատուր եղան: Աստուած երկրիս վրայ միշտ ունեցած է զինք սիրող եւ Իրեն հնազանդող անհատներ, բայց մարդոց մեծ մասը զԱստուած չսիրեր կամ Անոր հնազանդիր: Մարդկային պատմութեան շրջանը՝ մարդոց համար մեծ փորձութեան շրջան մ'եղած է: ՉԱստուած սիրողները երկրիս վրայ Անոր վկաններն եղած եւ վկայած են անոնց որ Սատանայի խորհրդարանական երկիրը կը կաղմեն: Սատանայ աներեւոյթ իշխանը, որ չար աշխարհի աստուածն է, մարդոց միտքերը կուրացուցած եւ թոյլ տուած չէ որ անոնք ըմբռնեն մարդկային աղբին օրհնութեան համար Աստուծոյ պատրաստած վսեմ ու սիրալիր ծրագիրը:

ԴԱՐՁ

Ս. Գիրքը կրկին ու կրկին կը յայտարարէ թէ՛ Աստուծոյ նպատակն է մարդկութիւնը մեղքէն ու մահէն փրկել եւ յետոյ ամէն մարդու լիառատ, կատարեալ ու անկաշկանդ պատեհութիւն շնորհել Աստուծոյ ծառայելու եւ կատարելութեան մէջ վերահաստատելու: Երբ այդ բանը տեղի ունենայ՝ այն ժամանակ նիւթական երկրիս վրայ ապրող եւ խորհրդարանական երկիրը կազմող մարդիկ Աստուծոյ փառքը պիտի ըլլան: Երբ Աստուած նիւթական երկիրը եղեմական գեղեցկութեան հասցնէ՝ այն ատեն նիւթական ամբողջ երկիրը մեծ Արարչին փառք ու պատիւ պիտի բերէ:

Ս. Գիրքը կը յայտնէ թէ՛ Աստուծոյ ծրագիրը հետեւեալն է. Իր սիրելի Որդւոյն զոհաբերութեամբ մարդկութիւնը փրկել. մարդոց մէջէն Իր անուանը համար ժողովուրդ մը հաւաքել, որոնք Քրիստոս Յիսուսի ընկերակիցներ պիտի ըլլան Անոր թաղաւորութեան մէջ. եւ յետոյ՝ մարդոց հնազանդները կատարելութեան մէջ վերահաստատել:

Ք. Թ. 33-ին էր որ Յիսուս սպաննուեցաւ: Ատկէ երեք օր վերջ՝ Աստուած զԱնիկա մահուընէ յարոյց: Բառասուն օր վերջ ալ՝ Յիսուս Քրիստոս երկինք՝ Եհովա Աստուծոյ ըով համբարձաւ: Ատկէ աստը օր վերջ, այսինքն՝ Հողեղալուստին, Աստուած սկսաւ ընտրել Քրիստոսի անդամները, որոնք Անոր եկեղեցին, Անոր մարմինն են (Կողոսացիս Ա. 18): Այդ օրէն մինչեւ հիմա՝ Աստուած Իր ճշմարտութեան Պօսքին պատգամը քարոզել կուտայ երկրիս վրայ ու այդ կերպով ի մի կը հաւաքէ ճշմարիտ եկեղեցին: Աստուած եկեղեցիին անդամներուն կամ Քրիստոնեաներուն արտօնութիւն չտուաւ որ երկրի վրայ եղած ատենին աշխարհը մաքրագործեն: Հետեւեալ համարները ցոյց կուտան թէ՛՝ Նա ինչ արտօնութիւն տուած էր Քրիստոս Յիսուսի եւ Անոր մարմինը կազմող եկեղեցիին անդամներուն. «Տէր Եհովայի հոգին իմ վրաս է. վասն զի Տէրը զիս օծեց, ու զիս զրկեց աղքատներուն աւետիս տալու, կտորած սիրտ ունեցողները բժշկելու, դերիններուն աշատութիւն, եւ բանտարկեալներուն՝ բանտին բացուելը հրատարակելու. Տիրոջը ընդունելի տարին ու մեր Աստուծոյն վրէժխնդրութեան օրը հրատարակելու, ամէն սղաւորները մխիթարելու, Սիօնի սղաւորներուն սրտելու, ու անոնց մոխիրի տեղ փառք, սուգի տեղ ուրախութեան իւղ, կտորած հոգիի տեղ գոփութեան պատմուծան տալու. եւ պիտի անուանեն զանոնք Արդարութեան բեւեկիններ, զորոնք Տէրը տնկեր է իր փառքին համար»— Եսայեայ ԿԱ. 1-3:

Համառօտաբար, այդ արտօնութիւնը Քրիստոնէին իշխանութիւն կուտայ հեղբուն ճշմարտութեան պատգամը հաղորդելու, զանոնք մխիթարելու եւ ճշմարտութեան միջոցաւ յոյս ներշնչելու անոնց, եւ իրրեւ Քրիստոսով եղբայրներ իրարու օգնելու որ աւելի լաւ հասկնան աստուածային ծրագիրը:

ՄԱՔՐԱԳՈՐԾՈՒՄ

Միտնի. — Բայց, Սր. Տէյվիտ, դարձեալ ըու ուշադրութիւնդ կը հրաւիրեմ Տքթ. Քէտմընի ըսածին. «Փոխան երկնակամարին նայելու եւ հարցնելու թէ Նա երբ պիտի դայ՝ մենք պարտինք գործի ձեռնարկել եւ երկիրը մաքրագործել Անոր գալստեան որպէս նախապատրաստութիւն: Եկէ՛ք երկիրը Աստուծոյ փառքովը զարդարենք. եւ ահա այդ ատեն է որ Քրիստոս կրնայ դալ»: Կը խորհի՞ր թէ իրաւ է որ Քրիստոնեաները բաժին մ'ունին երկիրս Տիրոջ գալստեան համար պատրաստելու գործին մէջ:

Տէյվիտ. — Մաքրագործութիւնը պատշաճ բան մըն է՝ եթէ զիտնանք թէ որոնք են մաքրութիւնը եւ թէ ով է որ պիտի ընէ մաքրագործութիւնը: Կը նկատեմ որ Տքթ. Քէտմըն ըսած է. «Փոխան երկնակամարին նայելու եւ հարցնելու թէ Նա երբ պիտի դայ՝ մենք պարտինք գործի ձեռնարկել եւ երկիրը մաքրագործել Անոր գալստեան որպէս նախապատրաստութիւն»: Այդ խօսքերը Ս. Գրոց վրայ հիմնուած չեն: Սակայն՝ թերեւս պիտի հարցնէք. Պատշաճ բան չէ՞ մաքրագործութիւնը: Անշուշտ պատշաճ է. բայց ի՞նչ բան է որ պիտի մաքրագործենք: Աստուած կը պատուիրէ Քրիստոսի հետեւիլ սկսողներուն որ ինքզինքնին մաքրեն ու մաքուր պահեն ինքզինքնին. սակայն՝ Աստուածաշունչին մէջ ոեւէ տեղ Քրիստոնէին պատուէր կամ արտօնութիւն տրուած չէ՝ ընդհանուր մարդկութեան մաքրագործութեան համար նոյն խնդիրն իրենք զիրենք: Մեծ դժուարութիւնը հոն է որ՝ անուանապէս Քրիստոնեայ կոչուողները, որոնք Քրիստոնեայ Աշխարհ ըսուածը կը կարմեն, խորհրդարանական երկրին անմաքրութեամբը անձնապէս այնքան աղտոտած են որ՝ մարդկութեան նըկատմամբ Աստուծոյ ունեցած նպատակները չեն կըրցած տեսնել: Ամէն անոնց՝ որ նպատակ յայտնած են



ՄԱՐԿԻՆԻ ԹԵԱՆ ՓՐԿԱԳԻՆԸ

Յիսուս աշխարհ գալէն առաջ գոյութիւն ունէ՞ր: Նա ի՞նչպէս կրնար կոյտէ մը ծնանիլ: Մեղաւոր Մարիամը ի՞նչպէս կրնար անմեղ Յիսուսը ծնիլ: Յիսուս ինչո՞ւ մեռաւ եւ Անոր մահը ի՞նչ արժէք ունի: Որո՞նք պիտի օգտուին անկէ:

Այս հարցումներուն թէ՛ զիտութեան եւ թէ՛ Սր. Գրոց համաձայն պատասխաններն ստանալու համար կարդա՛ վերոյիշեալ գրքոյկը, որ ցոյց պիտի տայ նաեւ մինչեւ հիմա քեզի անիմաստ երեւցած կարգ մը Սր. Գրոց համարներու ղեղեկութիւնն ու կարեւորութիւնը: 64 էջոց, գինն է 10 սէնթ:

Նամակ կամ դրամ ղրկուելու է ԴԻՏԱՐԱՆ-ի հասցէին, որ հետեւեալն է՝

THE TIDARAN

117 Adams Street, Brooklyn, N. Y., U. S. A.

Քրիստոս Յիսուսի քայլերուն հետեւիլ՝ պատուէր տրուած է՝ «Ուստի, սիրելիներ, որովհետեւ մենք այս խոստմունքները ունինք, մեր անձերը մարմնի ու հոգիի ամէն կերպ պղծութենէ մաքրեմք, եւ սրբութիւնը կատարելագործենք Աստուծոյ վախովը» — Բ. Կորնթացիս Է. 1:

Արդեօք հոս յիշուած մաքրագործութիւնը կը նըշանակէ՞ մաքրուիլ ու մէկ կողմ նետել այն անարգ եւ աղտոտ բաները միայն՝ որոնք մարդկութիւնը կը պատուհասեն: Ան ատկէ շատ աւելին կը նշանակէ: Ամէն ուղղամիտ անհատ պարտի մէկդի նետել անմաքուր ու չար բաները: Սակայն Քրիստոսնեայ մը պարտի ատկէ շատ աւելին ընել: Քրիստոսնեայ մը համաձայնած է Աստուծոյ կամքը կատարել, որ կը նշանակէ իր անձը աշխարհէն բաժնուած ու անջատ պահել: Սատանան է այս աշխարհիս աներեւոյթ իշխանը. եւ անոր կազմակերպութեան տեսանելի մասը կամ երկրիս կառավարող ուժերը կը բաղկանան շահադէտներէ ու վարպետ քաղաքադէտներէ եւ անոնց դաշնակիցներէն, որոնք կը դաւադրեն ժողովուրդը կողոպտել եւ զանոնք հլու հպատակ պահել: Արդեօք ճշմարիտ Քրիստոսնեայ մը կընա՞յ ճնշումի այդ ծրագիրներուն մէջ ոեւէ բաժին ունենալ եւ կամ այդ բանը ընդունելու օգնութիւն ընծայել: Ս. Գիրքը որոշ պատասխան կուտայ այս կէտին նկատմամբ, ըսելով. «Ի՞նչ մասնակցութիւն ունի արդարութիւնը անօրինութեան հետ, եւ ի՞նչ հաղորդութիւն ունի լոյսը խաւարին հետ, եւ ի՞նչ միաբանութիւն ունի Քրիստոս Բելիարի հետ, կամ ի՞նչ բաժին ունի հաւատացեալը անհաւատին հետ. եւ ի՞նչ յարմարութիւն ունի Աստուծոյ տաճարը կուռքերու հետ. վասն զի դուք կենդանի Աստուծոյ տաճարն էք. ինչպէս Աստուած ըսաւ, թէ անոնց մէջ պիտի բնակիմ, ու անոնց մէջ պիտի քալեմ, եւ անոնց Աստուած պիտի ըլլամ, ու

անոնք ինծի ժողովուրդ պիտի ըլլան: Ասոր համար ելէք անոնց մէջէն ու զատուեցէք, կ'ըսէ Տէրը, եւ պիղծ բանի մի դպչիք. ու ես ձեզ պիտի ընդունիմ» — Բ. Կորնթացիս Զ. 14-17:

Հոս ճշմարիտ Քրիստոսնէի մը պարզ ու բացայայտ պատուէր տրուած է՝ ոեւէ բաժին չ'ունենալ անարդարութեան հետ կապ ունեցող մարդկային ծրագիրներուն մէջ: Բանի որ այս աշխարհը Բանասրկու Սատանայի վերակացութեան եւ իշխանութեան տակ է՝ հետեւաբար ճշմարիտ Քրիստոսնեայ մը պարտի ատկէ բաժնուած ու անջատ ըլլայ: Ահա ասոր համար էր որ Յիսուս ըսաւ. «Իմ թագաւորութիւնս այս աշխարհէն չէ», հետոյ ասպագային կը վերաբերի:

Եկեղեցիներու Դաշնակցային Ժողովը (Ֆէտրէլ Բաուսըրլ Ալ Չըրչըս) ներկայ աշխարհային կազմակերպութեան մէկ մասն է, եւ այդ իրողութիւնը քողարկելու համար ոեւէ ջանք չթափեր: Այդ կազմակերպութիւնը Քրիստոսի անունը կը դործածէ, եւ անպատշաճ կերպով դայն կը պատկանեցնէ աշխարհային կազմակերպութեան մը՝ որուն աստուածը կամ աներեւոյթ իշխանը Սատանան է, եւ անոր Քրիստոսնեայ Աշխարհ անունը կուտայ: Ս. Գիրքը Քրիստոսնէին կը պատուիրէ իր անձը աշխարհէն անարատ պահել (Յակոբու Ա. 27): Կղերները եւ անոնց հօտերուն ընտիրները (կամ զլխաւորները) իրենց անձերուն վրայ պարզապէս աշխարհային արատներ ստանալէն ալ անդին դացած են: Անոնք ներկայիս աշխարհիս մէկ մասը կը կազմեն, պնդելով թէ այս ինչ աշխարհային կազմակերպութիւնը երկրիս վրայ Աստուծոյ թագաւորութեան քաղաքական արտայայտութիւնն է: Բանասրկուի կազմակերպութեան՝ եւ Քրիստոսի անունը դաւանող մարդոց միջեւ զոյութիւն ունեցած այս ասպորինի անջութիւնը Ս. Գիրքը կը դատապարտէ իբրեւ սլոնիկութիւն: Ուստի դրուած է. «Ծնացողներ

(կամ պոռնիկացողներ), չէ՞ք դիտեր որ այս աշխարհին սէրը Աստուծոյ դէմ թշնամութիւն է, ուստի ով որ կ'ուզէ այս աշխարհի բարեկամ ըլլալ, ինքզինք Աստուծոյ թշնամի կ'ընէ» — Յակոբու Դ. 4:

Բոլոր անոնք որ կ'ուզեն Տիրոջ հաճութեան արժանանալ՝ պարտին իրենց անձերը մաքրել եւ պատրաստ ըլլալ Անոր ծառայելու երբ Անոր թաղաւորութիւնը լիազօր կերպով գործունէութեան դրուի: Քրիստոնեայ մը կ'ըմբռնէ թէ՛ զօրաւոր պայքար մը մղելով է որ կրնայ ինքզինքը ուղիղ ճամբուն մէջ պահել: Քրիստոնէութիւն դաւանողներուն խոշոր մեծամասնութիւնը ինկած է խորամանկ հակառակորդին չար ազդեցութեան տակ: Աստուած նախատեսեց թէ՛ ինք իրեն Քրիստոնեայ անունը տուող կաղմակերպութիւնը այնքան պիտի ապականէր որ այլասերէր որ բնաւ պիտի չմաքրուէր: Անոնք մաքուր մտադրութեամբ ու նպատակով սկսան, բայց չար Աստանային շողոքորթութիւններուն մէջ ինկան: Աստուած Իր Երեմիա մարդարէին միջոցաւ առնոց նկատմամբ ըսաւ. «Դուն ըսիր, Օրինազանց չեմ ըլլար. սակայն ամէն բարձր բլուրի վրայ եւ ամէն կանանջ ծառի տակ ծոնցար՝ պոռնիկութիւն ըրիր: Ու ես քեզ ընտիր որթ ու բոլորովին հարազատ սերմ տնկեր էի, եւ դուն ի՞նչպէս վայրենի որթի անպիտան ճիւղերու պէս եղար ինձի: Եթէ բորակով լըւացուիս ու շատ օճառ ալ գործածես, քու անօրինութիւնը առջեւ բիծի պէս պիտի մնայ, կ'ըսէ Տէր Եհովա» (Երեմ. Բ. 20-22): Այս խօսքերը «կաղմակերպեալ Քրիստոնէութիւն» յորջորջուածին նկատմամբ է որ գրուած էին:

Ասիկա կը պատկերացնէ եկեղեցականութեան ներկայ վիճակը, ցոյց տալով թէ Բանսարկուին կաղմակերպութեան մէկ մասը կաղմելով՝ անոնք այնքան ապականած են որ կուրացած են իրենց անձնա-

կան վիճակին մասին եւ երբէք չեն կրնար մաքրել նոյն իսկ իրենց անձերը. ալ ուր կը մնայ ուրիշներ մաքրելը:

Այժմ Ս. Գրոց այս համարները բաղդատենք Եկեղեցիներու Դաշնակցային Ժողովին երեւելի նախագահին գործածած լեզուին հետ, որ ըսած էր. «Եկէ՛ք երկիրը Աստուծոյ փառքովը զարդարենք մարդուն բարոյական գործերուն միջոցաւ. եւ ահա այդ ատեն է որ Քրիստոս կրնայ գալ»: Ուրիշ խօսքով՝ Տէր Յիսուս Քրիստոս չկրնար գալ՝ մինչեւ որ Եկեղեցիներու Դաշնակցային Ժողովը երկիրը մարդուն բարոյական գործերովը զարդարելով՝ զայն Աստուծոյ հաճութեան արժանի վիճակի մը չբերէ: Տարակոյս չկայ որ՝ Աստուած Բանսարկուին կաղմակերպութեամբ բոլորովին ապականած խումբի մը պիտի չյանձնէր այս կամ այն բանը՝ Իր փառքովը զարդարելու գործը, ալ ուր կը մնայ երկիրը Քրիստոսի գալստեան յարմար վիճակի մը հասցնելու գործը: Թէ որ այս երեւելի մարդուն խօսքերը այնքան լրջօրէն ըսուած չ'ըլլային՝ անոնք աննկարագրելիօրէն ծաղրաշարժ պիտի ըլլային: Ծատ մը բարեմիտ եւ անկեղծ մարդիկ ատոնցմով պիտի կրնան խաբուիլ:

ԱՍՏՈՒԾՈՅ ԳՈՐԾԸ

Քրիստոս Յիսուս՝ Եհովա Աստուծոյ մեծ Գործակատարն է: Աստուած՝ Քրիստոսի միջոցաւ երկիրը պիտի մաքրագործէ եւ մարդուն բնակութեան յարմար վայրի մը վերածէ: Նա այդ բանը Իր գալէն վերջ է որ պիտի ընէ: Ոեւէ ինկած մարդ կամ մարդկային ապականած ոեւէ խումբ չկրնար կատարել այդ գործը: Գրուած է. «Քիանդի ահա ես նոր երկինք ու նոր երկիր կ'ստեղծեմ. եւ առաջինները պիտի չյիշուին ու մարդուս միտքը պիտի չգան» (Եսայ. ԿԵ. 17): Աստուած նոր երկիրը հաստատելէ առաջ՝ պիտի կործանէ ներկայիս գոյութիւն ունեցած խորհրդարանական

չար երկիրը: Ներկայիս երկրիս վրայ իշխող հոյարտ, ամբարտաւան, դոռող ու մեծարելի՝ մարդիկ, այսինքն՝ շահադէտները, քաղաքագէտները եւ քարոզիչներն են՝ որ կը կաղմեն սատանայական անսուբբ ընկերակցութիւնը. սակայն անոնց ամբարտաւանութիւնն ու հպարտութիւնը պիտի ցածցուին ու պարսպ պիտի հանուին, ինչպէս որ դրուած է. «Զօրաց Տէրը այս խորհուրդը ըրաւ, որպէս զի ամէն փառքին ամբարտաւանութիւնը խայտառակէ, ու երկրի բոլոր պատուաւորները անարդէ» (Յսայ. ԻԳ. 9): Այս ներշնչեալ խօսքերը ցոյց կուտան թէ Եկեղեցիներու Դաշնակցութիւնը պիտի չկրնայ երկիրը մաքրագործել ու զանիկա փառքով զարդարել:

Ներկայիս երկրիս ժողովուրդներուն վրայ իշխող կաղմակերպութիւնը իր դոռողութեանն ու հայհոյութեանը պատճառաւ պիտի դատարկացուի. «Ահա Տէրը երկիրը կը պարսպ ու զանիկա կը դատարկացնէ, եւ տակնուվրայ ընելով անոր բնակիչները կը ցրուէ: ... Երկիր բոլորովին պիտի պարսպուի, ու բոլորովին պիտի կոշոպտուի, քանզի այս խօսքը Տէրը խօսեցաւ: Երկիր սուգ կը բռնէ ու կը մարի, աշխարհ կը նուաղի ու կը մարի, երկրի ժողովուրդին մեծերը (կամ՝ ամբարտաւանները) կը նուաղին» — Եսայեայ ԻԴ. 1-4:

Ս. Գիրքը որոշապէս ցոյց կուտայ թէ՛ երկրիս աղբերուն աներեւոյթ իշխանը Սատանան է: Այս աղբերուն մէկ մասը՝ իրենց խօսքով՝ կը կաղմեն Քրիստոնեայ Աշխարհը կամ Կաղմակերպեալ Քրիստոնէութիւնը, եւ կը յայտարարեն թէ Քրիստոնեայ աղբեր են: Համաշխարհային Պատերազմի տեւողութեան զիրար սպաննել ջանալէ վերջ՝ այդ աղբերը իրարու քով եկան ու կաղմեցին դաշնակցութիւն մը կամ ընկերակցութիւն մը: Եկեղեցիներն ալ իրենց մէջ դաշնակցութիւն մը կաղմեցին եւ միացան Աղբերու Լի-

կան կամ Աղբաժողովը յառաջ բերելու համար: Եկեղեցիներու Դաշնակցութիւնը բացէ ի բաց յայտարարեց թէ՛ Աղբերու Լիկան երկրիս վրայ Աստուծոյ թագաւորութեան քաղաքական արտայայտութիւնն է: Ըստ Աղբերու Լիկայի եւ Եկեղեցիներու Դաշնակցութեան ըրած յայտարարութեանց՝ անոնց նպատակն է երկիրը մաքրագործել ու զայն բնակութեան յարմար վայրի մը վերածել: Բայց իրենց իրական նպատակն է երկրիս ժողովուրդներուն վրայ տիրել եւ զանոնք իրենց իշխանական զօրութեան հպատակ պահել: Աղբերու Լիկային հայրը Բանասրկու Սատանան է. Բրիտանական Կայսրութիւնը անոր մայրն է, իսկ միւս աղբերն ալ դայակներն են: Լիկան իրապէս կը բաղկանայ քարոզիչներէն, վարսէտ քաղաքագէտներէն ու շահադէտներէն, եւ կղերներն ալ կախարդի դերը կը կատարեն այդ կարգադրութեան սրբութեան դրօշմ մը տալու համար:

Արդեօք Աստուած սահմանած էր որ՝ աղբերէ կամ եկեղեցիներէ կաղմուած այդպիսի դաշնակցութիւն մը երկրիս ժողովուրդներուն վրայ տիրէ: Կը պատասխանեմ՝ Ո՛չ. ընդհակառակը Նա ցոյց կուտայ թէ այդ ընկերակցութիւնը կամ դաշնակցութիւնը հիմնայատակ պիտի կործանի: Իր մարգարէին միջոցաւ Նա կ'ըսէ. «Ով ժողովուրդներ, դաշնակից եղէք, բայց պիտի խորտակուիք. ով երկրին հեռաւոր տեղերը, ականջ դրէք, պատրաստուեցէք, բայց պիտի խորտակուիք. պատրաստուեցէք, բայց պիտի խորտակուիք. խորհուրդ ըրէք, բայց պիտի խափանուի. խօսք խօսցէք, բայց պիտի չհաստատուի» — Եսայեայ Ը. 9, 10:

Երկիրը իսկապէս ասպականողներն եղած են այն ուժերը՝ որոնք ներկայիս աշխարհի աղբերուն եւ ժողովուրդներուն վրայ կ'իշխեն եւ որոնք Քրիստոնեայ Աշխարհ կամ Կաղմակերպեալ Քրիստոնէութիւն

անունները կուտան իրենք իրենց: Դուն պէտք է մոռնան թէ՛ աշխարհիս վրայ կը նախադասէ Բանսարկու Սատանան. թէ՛ նա է աներեւոյթ իշխանը. թէ՛ աշխարհը կը բաղկանայ երկինքէն, անտեսանելի մասէն, եւ երկրէն, որ կաղմակերպութեան տեսանելի մասն է: Տիրոջ եկած ժամանակ փոխանակ խորհրդարանական երկիրը մաքրուած ըլլալու՝ ատոր ճիշդ հակառակը պիտի ըլլայ: Ահա՛ այսպէս է որ կ'ըսէ Տէրը ատոր նկատմամբ. «Աչքերնիդ վեր վերցուցէ՛ք դէպի (չար) երկինք, ու վար նայեցէ՛ք դէպի (չար) երկիր. քանզի երկինք ծուխի պէս պիտի անցնի, ու երկիր հանդերձի պէս պիտի մաշի, նմանապէս անոր բնակիչներն ալ պիտի մեռնին. բայց իմ փրկուածներն յաւիտենական պիտի ըլլայ, ու իմ արդարութիւնս պիտի չպակսի»— Եսայեայ ԾԱ. 6:

Ծուխ կը նշանակէ ոչնչացած բանի մը պարզ յիշատակը. ու երբ չար երկինքը ծուխի պէս կ'անհետանայ՝ այդ կը նշանակէ թէ ան ոչնչացած է: Երբ հանդերձ մը կը հիննայ ու ալ ոեւէ բանի չծառայեր՝ այն ատեն մէկդի կը նետուի: Ատիկա խորհրդարանորէն կը պատկերացնէ թէ՛ երկրիս կաղմակերպուած իշխանութիւնները հինցած ու մէկ կողմ նետուելու վրայ են: Անկասկած՝ երկրիս ժողովուրդներուն վրայ իշխող կառավարական բռնապետական դրութիւնները յաւիտեան պիտի անհետանան, որմէ վերջ Տիրոջ միջոցաւ պիտի հաստատուի արդար կառավարութիւն մը: Երկիրը ապականած են անոնք՝ որ Տիրոջ անունով յայտարարած են թէ ժողովուրդին վրայ կ'իշխեն աստուածային իրաւասութեամբ եւ արտօնութեամբ:

Աստուած՝ դարեր առաջ գուշակեց ներկայիս մեր աչքին առջեւ գոյութիւն ունեցած վիճակը, եւ անոր նկատմամբ Իր մտադրութիւնը յայտնեց սա խօսքերով. «Ահա Տէրը երկիրը կը պարպէ ու զանկ-

կա կը դատարկացնէ, եւ տակնուվրայ ընելով անոր բնակիչները կը ցրուէ: Ու ինչպէս է ժողովուրդը՝ քահանան ալ այնպէս. ինչպէս է ծառան՝ իր տէրն ալ այնպէս. ինչպէս է աղախինը՝ իր տիկինն ալ այնպէս. ինչպէս է ծախու առնողը՝ ծախողն ալ այնպէս. ինչպէս է փոխ տուողը՝ փոխ առնողն ալ այնպէս. ինչպէս է տոկոսիք առնողը՝ տոկոսիք տուողն ալ այնպէս պիտի ըլլայ: Երկիր բոլորովին պիտի պարպուի, ու բոլորովին պիտի կողոպտուի, քանզի այս խօսքը Տէրը խօսեցաւ: Երկիր սուղ կը բռնէ ու կը մարի, աշխարհ կը նուաղի ու կը մարի, երկրի ժողովուրդին մեծերը կը նուաղին: Ու երկիր իր բնակիչներուն տակ պղծուեցաւ, քանզի անոնք օրէնքները դանց ըրին, պատուիրանքները փոխեցին, յաւիտենական ուխտը խախտեցին: . . . Եւ այն օրը Տէրը բարձրէն այցելութիւն պիտի ընէ հպարտներուն զօրքին, ու երկրի վրայ՝ երկրի թագաւորներուն»— Եսայեայ ԻԴ. 1-5, 21:

Դուն պիտի տեսնես թէ՛ Երբ Ս. Գրոց մէջ ամէն անգամ «այն օրը» ասացուածքը կը դործածուի՝ ատով կ'ակնարկուի Տիրոջ գալուն եւ Անոր թագաւորութեան հաստատուելուն ժամանակուն: Տէր Յիսուս Իր յարութենէն վերջ երկինք համբարձած ժամանակ՝ այս աշխարհի աներեւոյթ իշխանն էր՝ Աստուծոյ թշնամի Սատանան: Աստուածաշունչը ցոյց կուտայ թէ Աստուած Իր սիրելի Որդիին ըսաւ այն ատեն. «Նստէ իմ աջ կողմս, մինչեւ զու թշնամիներդ ստքերուդ պատուանդան ընեմ» (Մաղմ. ճԺ. 1): Եւ հովայի պատուանդանը երկիրն է (Եսայ. ԿԶ. 1): Ս. Գրոց այս համարները ցոյց կուտան թէ Աստուած՝ Գրիստոս Յիսուս իրբեւ միջոց պիտի գործածէ Սատանան վտարելու, զայն Իր ստքերուն տակն առնելու եւ անոր թէ՛ տեսանելի եւ թէ՛ անտեսանելի կաղմակերպութիւնը ոչնչացնելու համար: Ս. Գրքը

ցոյց կուտայ թէ Ազգերու ժամանակները լրացան 1914-ին եւ ատիկա նշանակեց աշխարհի վախճանը, կամ աւելի՛ սկզբնաւորութիւնը այն ժամանակուան՝ երբ Աստուած արգելք պիտի հանդիսանար այս աշխարհի վրայ Սատանային ունեցած իշխանութեան շարունակութեանը: Մարգարէին հետեւեալ խօսքերը ցոյց կուտան թէ՛ Անոր նպատակն էր որ Բանասահուն երկիրքէն վար նետուի եւ թէ Սատանային դէմ գործողութեան ձեռնարկողն ըլլայ Յիսուս՝ Նհովայի աշխոյժ եւ ժրջան գործակալը: «Տէրը քու գորութեանդ դաւադանը Սիօնէ պիտի ղրկէ. քու թշնամիներուդ մէջտեղը դուն տիրէ» (Սաղմոսաց ձԺ. 2): Նհովա Քրիստոսի միջոցաւ այն ատեն Բանասահուն դէմ գործողութեան ձեռնարկեց, եւ Բանասահուն դէմ այդ գործողութիւնը պիտի շարունակուի՝ մինչեւ որ անոր դրութիւնը հիմնայատակ կործանի: «Տէրը քու աջ կողմդ է. անիկա իր բարկութեան օրը թաղաւորներ պիտի ջարդէ: Անիկա հեթանոսներուն մէջ դատաստան պիտի ընէ, մեռելներով պիտի լեցնէ, շատ երկիրներու վրայ գլուխ եղողները պիտի ջարդէ»— Սաղմոսաց ձԺ. 5, 6:

Իրերու ներկայ վիճակը ճամբայ կը պատրաստէ Արմազեղոնի մեծ պատերազմին: Այդ պատերազմը պիտի վճռէ թէ ո՛վ պիտի ըլլայ երկրիս գերազոյն իշխանը: Ս. Գիրքը ատիկա կը կոչէ Ամենակալ Աստուծոյ պատերազմը, ինչու որ անիկա Աստուծոյ պատերազմը պիտի ըլլայ Բանասահուն դէմ, Սատանային դիմադրող հեղինակաւոր պաշտօնեան ըլլալով Քրիստոս Յիսուս (Յայտ. ԺԳ. 14, ԺԹ. 11, 13):

Արմազեղոնի պատերազմին մանրամասնութեանց համար, ինչպէս որ Ս. Գիրքը կ'ընծայէ, քեզի կը թեւադրեմ Նիւ Նորքի Պրուքին քաղաքին Միջադպային Ս. Գիրք Ուսանողաց Միութեան հրատարակած Ա.ՉԱՏԱԳՐՈՒԹԻՒՆ անունով գիրքը: Այս

առթիւ գլխաւոր կէտերը միայն կրնամ շօշափել՝ քեզի ցոյց տալով թէ՛ Քրիստոսի եկած ժամանակ երկիրը մարդուն բարոյական գործերուն շնորհիւ Աստուծոյ փառքովը փոխանակ զարդարուած ըլլալու՝ Քրիստոս պիտի կործանէ այդ նպատակաւ հոս յառաջ տարուած ամէն աշխատանք:

Քրիստոսի երկրորդ դաւաճեան նպատակն է դատել երկիրը, այսինքն՝ երկրիս կազմակերպուած կառավարութիւնները (Սաղմ. ԴԶ. 13, Բ. Տիմ. Դ. 1, Սաղմ. ԺԱ. 4, 5): 1914-ին ազգերը բարկացան եւ յառաջ եկաւ Համաշխարհային Պատերազմը: Համաշխարհային Պատերազմէն վերջ՝ ազգերը կարգադրութիւն մ'ըրին՝ Ազգերու Լիկա անունով, որուն հաւանութիւն տուին կղերները, յայտարարելով թէ՛ անիկա «երկրիս վրայ Աստուծոյ թագաւորութեան քաղաքական արտայայտութիւնն է»: Աստուած ըսկաւ Իր բարկութիւնը յայտնել աշխարհի դէմ: Արդ նկատի առնենք գրուածը. «Եւ ազգերը բարկացան. ու քու բարկութիւնդ եկաւ, եւ մեռելներուն ժամանակը՝ որպէս զի դատուին, ու վարձք տաս քու ծառաներուդ, մարգարէներուն, եւ սուրբերուն ու քու անունէդ վախցողներուն, պղտիկներուն ու մեծերուն, եւ երկրի ապականիչները ապականես»— Յայտնութեան ԺԱ. 18:

Ս. Գրոց մէջ քաղաքը խորհրդանշան է ժողովրդային կազմակերպուած մարմնի: Կազմակերպեալ Քրիստոնէութիւն կոչուած հսկայ կազմակերպութիւն մը կամ կազմակերպուած մարմին մը կայ: Ամերիկայի Եկեղեցիներու Դաշնակցային Ժողովը այդ հսկայ կազմակերպութեան մէկ մասն է: Այդ կազմակերպութիւնը բանեցնող եւ կառավարող մարդիկը զԱստուած իրապէս կը սիրեն ու Անոր խոնարհարար կը ծառայեն: Իուն գիտես որ անոնք ատիկա չեն ըներ, ինչու որ անոնցմէ շատեր կ'ուրանան Աստուա-

ծաշունչին ներշնչուած ըլլալը, որ Աստուծոյ Խօսքն է, եւ նոյն ատեն կը յայտարարեն թէ մարդիկ յառաջ պիտի անցնին ու ընեն այն՝ ինչ որ միայն Աստուած կրնայ ընել: Գիտեմ որ անոնք կը յայտարարեն թէ Աստուծոյ կը հաւատան. սակայն անոնք իրենց անձնական իմաստութիւնը կը քարոզեն եւ կ'անտեսեն Աստուծոյ յայտնադորձուած իմաստութիւնը: Եկեղեցական կազմերու մէջ եղող մարդոց քարոզութիւններն են որ ժողովուրդը վախի մէջ կը պահեն, որ չ'ըլլայ թէ եկեղեցիներու առաջնորդներուն տրհածութիւն պատճառելով Ամենակարողին տհաճութիւն պատճառեն: Այդ առաջնորդները, ինչպէս նաեւ անոնց հետեւորդները, իրենց շրթներովն է որ Տիրոջ կը մօտենան. ու անոնք ճշմարտօրէն Աստուծոյ չեն երկրպագեր: Աստուծոյ մարգարէն ահա այդ վիճակն է որ կը նկարագրէ երբ կ'ըսէ. «Անոր համար Տէրը կ'ըսէ, Որովհետեւ այս ժողովուրդը ինձի բերնովը կը մօտենայ, եւ զիս շրթունքներովը կը պատուէ, բայց անոնց սիրտը ինձմէ հեռու է, ու ինձմէ ունեցած վախերնին մարդոց սորվեցուցած պատուիրանք մըն է, անոր համար ահա ես այս ժողովուրդին մէջ այսուհետեւ զարմանալի գործեր ու հրաշքներ պիտի ընեմ. եւ անոնց իմաստուններուն իմաստութիւնը պիտի կորսուի, ու հանճարեղներուն հանճարը բնաջինջ պիտի ըլլայ» — Եսայ. Եսայ. 13, 14:

Մեծ կղերներէ, շահադէտներէ եւ քաղաքագէտներէ կազմուած Քրիստոնեայ Աշխարհ կամ Կաղմակերպելալ Քրիստոնէութիւն յորջորջուած հրակայ կաղմակերպութիւնն է որ կը տիրէ երկրիս վրայ: Քրիստոնեայ Աշխարհը կազմող հօտին գլխաւորներն են շահադէտներն ու քաղաքագէտները: Աստուծոյ կղերներուն հետ միասին՝ կը կազմեն այն անսուրբ ընկերակցութիւնը, որ կը յայտարարէ թէ եր-

կրիս վրայ Տիրոջ անունովն է որ կ'իշխէ: Ատիկա է դոյութիւն ունեցած այն միակ քաղաքը կամ կաղմակերպութիւնը՝ որ Քրիստոսի անունը կ'ստանձնէ, եւ սակայն Քրիստոս կամ զԱստուած չ'ներկայացներ: Արդ նկատի առնենք թէ Տէր Աստուած ինչ կ'ըսէ այդ կաղմակերպութեան մասին, եւ թէ Նա ինչ պիտի ընէ Քրիստոսի միջոցաւ. «Քանզի ահա ես իմ անունովս կոչուած քաղաքին վրայ չարիք բերելու սկսայ. միթէ դուք անպատիժ պիտի մնաք. անպատիժ պիտի չ'մնաք, քանզի երկրի բոլոր բնակիչներուն վրայ սուր պիտի կանչեմ, կ'ըսէ զօրայ Տէրը: Ուստի դուն այս բոլոր խօսքերը անոնց մարգարէանալով՝ անոնց ըսես, Տէրը բարձրէն պիտի գոռայ, ու իր սուրբ բռնակութենէն իր ձայնը պիտի տայ. իր բնակարանին վրայ ահարկու ձայնով պիտի գոռայ, խաղող կոխողներու աղաղակին պէս երկրի բոլոր բնակիչներուն պատասխան պիտի տայ» — Երեմ. ԻՅ. 29, 30:

Այս խօսքերը ցոյց կուտան թէ՛ Քրիստոսի երկրորդ անգամ եկած ատեն՝ մարդուն բարոյական գործերուն շնորհիւ երկիրը Աստուծոյ փառքովը զարդարուած պիտի ըլլայ, հասաւ ատոր ճիշդ հակառակը: Եթէ կղերները իրենց Աստուածաշունչը հասկցած ըլլային ու ժողովուրդին ճշմարտութիւնը խօսէին՝ իրենք ալ այսպէս պիտի ըսէին անոնց: Վերոյիշեալ նեղութիւնը ամենասոսկալին պիտի ըլլայ: Յիսուս այդ միեւնոյն նեղութեան ակնարկեց իր երկրորդ գալստեան մասին խօսած ատեն: Նա ըսաւ թէ՛ աշխարհիս վախճանին եւ իր թաղաւորութեան հաստատուելուն մասին երկրիս ազգերուն վկայութիւն տրուելէն անմիջապէս վերջ է որ վրայ պիտի հասնի այդ մեծ նեղութիւնը, որ վերջինը պիտի ըլլայ: Ահաւասիկ Անոր ըսածները. «Քանզի այն ատեն այնպիսի մեծ նեղութիւն պիտի ըլլայ, որու նմանը աշխարհի սկիզբէն մինչեւ հիմա եղած չէ, ոչ ալ

(անոր նմանը) պիտի ըլլայ (այնուհետեւ)»— Մատթէոսի ԻԴ. 21, 22:

Հովիւները (կղերները) եւ անոնց հօտին գլխաւորները՝ երկիրը մարդուն բարոյական գործերուն շնորհիւ փոխանակ Աստուծոյ փառքովը զարդարելու՝ անոնք նոյն իսկ այդ նեղութենէն փախչելու ճամբայ պիտի չգտնեն, հապա անկէ պիտի պաշարուին ու տապալին: Աստուած անոնց ըրածը հիմնալատակ պիտի կործանէ:

Արդ՝ նկատի առնենք այդ չար կաղձին մասին մարգարէին ըսած խօսքերը. «Բարձր ձայնը մինչեւ երկրի ծայրերը պիտի հասնի, վասն զի Տէրը ազգերուն հետ դատաստան ունի. անիկա ամէն մարմնի հետ դատ պիտի վարէ, ու ամբարիշտները սուրի պիտի տայ, կ'ըսէ Տէրը: Զօրաց Տէրը այսպէս կ'ըսէ. Ահա չարիք պիտի ելլէ, մէկ ազգէ ուրիշ ազգի պիտի անցնի, ու երկրի ծայրերէն մեծ մրրիկ պիտի ելլէ: Եւ այն օրը Տիրոջմէ սպաննուածները երկրի մէկ ծայրէն մինչեւ միւս ծայրը պիտի ըլլան. անոնց համար սուգ պիտի չբռնուի, անոնք պիտի չթողլուին ու պիտի չթաղուին, երկրի երեսին վրայ աղբի պէս պիտի ըլլան: Ողբացէք, ով հովիւներ, ու աղաղակեցէք, եւ մոխիրի մէջ թաւալեցէք, ով հօտին ընտիրները (գլխաւորները). վասն զի ձեր մորթուելու եւ ցիրուցան ըլլալու օրերը լրացած են, ու պատուական ամանի պէս պիտի իյնաք: Եւ հովիւներուն փախչելու ճամբան ու հօտին ընտիրներուն աղատելու միջոցը պիտի կորսուի: Հովիւներուն աղաղակին ձայնը եւ հօտին ընտիրներուն ոռնալուն ձայնը կայ, վասն զի Տէրը անոնց արօտները կորսնցուց. ու Տիրոջը սաստիկ բարկութեանը երեսէն խաղաղութեան բնակարանները ամայութեան դարձան»— Երեմեայ ԻԵ. 31-37:

Անհեթեթութիւն մըն է՝ երկրիս մարդուն կողմէ զարդարուելու եւ Քրիստոսի եկած ատեն դայն յարմար վայրի մը վերածուելու մասին խօսիլ: Աստուած՝ ամբարիշտ կաղձերուն դէմ պատերազմելու եւ զանոնք ոչնչացնելու համար, Քրիստոս Յիսուս Հզօր Էակն է որ պիտի գործածէ: Նա՛ է Յնովային կողմէ ընտրուածն ու այդ նպատակին համար կանչուածը: Նկատի առնենք այս կէտին շուրջ եղած Ս. Գրոց համարները. «Ով ազգեր, մօտեցէք որպէս զի լսէք. ով ժողովուրդներ, ահանջ տուէք. երկիր ու անոր լիութիւնը, աշխարհ ու անոր բոլոր բնակիչները թող մտիկ ընեն: Վասն զի Տիրոջը բարկութիւնը ամէն ազգերուն վրայ է. անիկա զանոնք նոյնից, զանոնք սպանման մատնեց»— Եսայիայ ԼԴ. 1, 2:

«Ով Հզօր, թուրդ մէջքդ կապէ քու փառքովդ ու վայելչութիւնովդ: Ու քու վայելչութիւնովդ յաջողուէ. ճամարտութեան ու հեղութեան եւ արդարութեան համար հեծիր. ու քու աջ ձեռքդ քեզի ահաւոր բաներ պիտի սորվեցնէ»— Սաղմոսաց ԽԵ. 3, 4, Յայտնութեան ԺԹ. 11-13:

Կաղձակերպեալ Քրիստոնէութիւնը, ու մասնաւորապէս կղերականութիւնը, կը յայտարարէ թէ ինք երկրիս վրայ արդար վիճակ մը պիտի հաստատէ ու երկրիս Տիրոջ գալստեան յարմար վայրի մը պիտի վերածէ: Ուրիշ խօսքով՝ անոնք մտադրած են Տիրոջմէ առաջ անցնիլ եւ զանիկա Անոր համար կարգի դնել: Բայց Տէրը կ'ըսէ անոնց. «Ուրեմն ինձի սպասեցէք, ... մինչեւ այն օրը որ որսի համար ոտքի ելլեմ, քանզի իմ վճիռս ազգերը ժողվել, թաղաւորութիւնները գումարել է, որպէս զի անոնց վրայ իմ սրտմտութիւնս, իմ բոլոր սաստիկ բարկութիւնս, թափեմ. քանզի բոլոր երկիրը իմ նախանձիս կրակովը պիտի սպառի: Վասն զի այն ժամանակ ժողովուրդներուն շրթունքները մաքուր շրթունքներու

պիտի դարձնեմ, որպէս զի ամէնը Տիրոջը անունը կանչեն, ու մէկ սրտով անոր ծառայութիւն ընեն»— Սուփոնեայ Գ. 8, 9:

Մարդոց գոռոզութեանն ու ամբարտաւանութեանը պատճառաւ՝ Աստուած ներկայի բռնապետական դրութիւնները ջարդ ու փշուր պիտի ընէ եւ ապա ժողովուրդին պիտի ներկայացնէ ճշմարտութեան մաքուր պատգամ մը, որպէս զի բոլորն ալ ճանչնան զԱնիկա: Այնպէս կը թուի թէ՛ անհրաժեշտ է որ ժողովուրդը մեծ նեղութեան ու անձկութեան մէջէն անցնի՝ որպէս զի անոնք այն դիտակցութեանը դան թէ՛ Եհովան է Աստուած: Երբ անոնք մեծ տաղնապի մէջ են՝ ահա այդ ատեն է որ Տէրը պիտի կանչեն, ու ահա այդ ատեն է որ Տէրը պիտի լսէ ու օգնէ անոնց որ սրտով անկեղծ են: Ս. Գիւրջը այսպէս կ'ըսէ. «Այն ատեն Տիրոջը կ'ազդակեն իրենց նեղութեանը մէջ, ու կը փրկէ զանոնք իրենց տառապանքներէն: Մրրիկը հանդարտութեան կը դարձնէ, ու ալիքները կը դադարին: Իրենք ալ կ'ուրախանան որ դադարեցան. ու կ'առաջնորդէ անոնց՝ իրենց ուղած նաւահանգիստը»— Սաղմ. ճի. 28-30:

Այս բաները այնքան ալ ցոյց չեն տար թէ՛ Եկեղեցիներու Դաշնակցային ժողովը կարող պիտի ըլլայ երկիրը Աստուծոյ փառքովը զգեստաւորել եւ դանիկա Գրիստոսի երկրորդ դարստեան համար պատրաստել: Բացայայտ պէտք է ըլլայ թէ՛ այն մարդիկը որ կ'ըսեն թէ այդպիսի բան մը կրնան գլուխ հանել՝ ինքզինքնին եւ ուրիշ շատեր է որ կը խաբեն: Ազգերը ներկայիս իրարու դէմ կը փրփրին: Անոնք խաղաղութեան մասին կը խօսին երբ նոյն ատեն պատերազմի պատրաստութիւն կը տեսնեն: Ժողովուրդները նեղութեան ու տաղնապի մէջ են. անոնք պարապ տեղը կ'երեւակայեն թէ՛ Գրիստոնեայ Աշխարհ ըսուածին մէջ իրենց ունեցած առաջնորդները

կրնան բոլոր դժուարութիւնները հարթել: Ժողովուրդները այս սխալ եզրակացութեան յանգած են՝ Եկեղեցիներու Դաշնակցային ժողովին երեւելի նախադահին արտասանած իմաստակութիւններուն վերայ հաւատք ընծայելով:

Աստուծոյ մարդարէն այդ խնդրոյն մասին ասպէս խօսեցաւ. «Ինչո՞ւ հեթանոսները (ազգերը) խրոսովութիւն կ'ընեն, ու ժողովուրդները պարապ բան կը մտածեն, երկրի թագաւորները ինքզինքնին կը հաստատեն, ու իշխանները մէկտեղ խորհուրդ կ'ընեն Տիրոջը դէմ ու անոր Օծեալին դէմ, ըսելով, կոտորենք անոնց կապերը, ու մեզմէ ձգենք անոր լուծը: Երկինքը բնակողը անոնց վրայ պիտի ծիծաղի, Տէրը ծաղր պիտի ընէ զանոնք: Այն ատեն իր բարկութիւնովը պիտի խօսի անոնց, եւ իր սրտմբտութիւնովը պիտի խոտլեցնէ զանոնք, ըսելով, Ես օծեցի իմ թագաւորս իմ սուրբ լեռանս, Սիօնի, վերայ: Հրամանը պիտի պատմեմ. Տէրը ինծի ըսաւ, Դուն իմ Որդիս ես, ես այսօր քեզ ծնայ. խնդրէ ինձմէ, ու հեթանոսները քեզի ժառանգութիւն պիտի տամ, ու երկրի ծայրերը՝ քեզի ստացուածք. զանոնք երկաթէ դաւադանով պիտի կոտորես, բրուտի ամանի պէս պիտի փշրես զանոնք: Ուստի հիմա, ով թագաւորներ, միտքերնիդ առէք, երկրի դատաւորներ, խրատուեցէք: Երկիրդով Տիրոջը ծառայեցէք ու դողալով անկէ վախցէք»— Սաղմ. Բ. 1-11:

ԱՍՏՈՒԾՈՅ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Եհովա՛ Իր Դանիէլ մարգարէին միջոցաւ աշխարհակալ պետութեանց մէկ համառօտ պատմութիւնը ըրաւ Բաբելոնէն սկսելով: Այդ պատմութիւնը տրուեցաւ մարգարէական ոճով, եւ ներկայիս կըրնանք հասկնալ՝ երբ զայն կը բաղդատենք յետոյ երեւան եկած պետութեանց պատմութեանը հետ: Ս.

Գրոց ուրիշ համարներ որոշապէս ցոյց կուտան թէ՛ Բարեւոնէ առաջ գոյութիւն ունեցող աշխարհակալ պետութիւններն էին՝ Եգիպտոսն ու Ասորեստանը: Բարեւոնէ վերջ երեւան եկան ուրիշ աշխարհակալ պետութիւններ, որոնցմէ էին՝ Մարա-Պարսկաստանը, Յունաստանը, Հռովմը, ու Բրիտանական Կայսրութիւնը, ընդամէնը եօթը հատ ըլլալով: Յետոյ Տիրոջ մարգարէն ցոյց կուտայ թէ՛ այդ եօթին պիտի յաջորդէ ութերորդ մը, որ իրապէս աշխարհիս գլխաւոր աղգերու դաշնակցութիւն մը կամ ընկերակցութիւն մըն է: Աղգերու Լիկան կ'իրականացնէ այդ մարգարէութիւնը: Մարդկային պատմութեան ահա ճիշդ այդ ժամանակաշրջանին մէջ է որ կ'ապրինք այժմ:

Այդ աշխարհակալ պետութիւնները դադարեցնուցէտի մը հասած են ու կը յայտարարեն թէ իրենց դժուարութիւնները Աղգերու Լիկային միջոցով է որ կը հարթեն: Աստուած կ'ըսէ անոնց նկատմամբ. «Ու այն թագաւորներուն օրերը երկինքի Աստուածը թագաւորութիւն մը պիտի հանէ, որ յաւիտեան պիտի չաւրի, եւ այս թագաւորութիւնը ուրիշ ժողովուրդի պիտի չթողուի. անիկա այս բոլոր թագաւորութիւնները պիտի փշրէ ու պիտի հատցնէ, ու ինք յաւիտեան պիտի մնայ»— Դանիելի Բ. 44:

Ս. Գրոց այս համարէն որոշապէս յայտնի է թէ՛ ո՛չ մեծ շահագէտները, ո՛չ քաղաքագէտները, ո՛չ կղերները, ո՛չ Եկեղեցիներու Դաշնակցային ժողովը, եւ ո՛չ ալ այդ տեսակ ուրիշ ոեւէ կազմակերպութիւն ոեւէ կապ պիտի ունենան այդ արդարութեան թագաւորութեան ու անոր հաստատմանը հետ:

Ասիկա վճռական ապացոյց է թէ՛ Եկեղեցիներու Դաշնակցային ժողովի նախագահին այն յայտարարութիւնը թէ՛ երկիրը մարդուն բարոյական դործերուն չնորհիւ կ'ընայ Աստուծոյ փառքովը դար-

դարուիլ՝ բացարձակ դատարկարանութիւն մըն է: Անոր ըրածը դատարկարանութիւնէ ալ վատ՝ հայհոյութիւն մըն է: Մարդիկ կ'ըսեն թէ՛ իրենք կարող են ընելու այն՝ ինչ որ միայն Աստուած կ'ընայ ընել ու պիտի ընէ: Տիրոջ թագաւորութիւնը պիտի հաստատուի՝ Քրիստոս ըլլալով անոր Գլուխը, ու այդ թագաւորութիւնը ջարդ ու փշուր պիտի ընէ այս աշխարհի անարդար դրութիւնները: Այդ արդարութեան կառավարութիւնը Քրիստոսի ուսերուն վրայ պիտի հանդէի, ու ան յաւիտեան խաղաղութեան թագաւորութիւն մը պիտի ըլլայ:

ԱՍՏՈՒԾՈՅ ՊԱՏՈՒԱՆԴԱՆԸ

Աստուած Իր մարգարէին միջոցաւ կ'ըսէ. «Երկինք իմ աթոռս է, ու երկիր իմ ոտքերուս պատուանդանն է» (Եսայեայ ԿԶ. 1): Նա դարձեալ կ'ըսէ. «Իմ ոտքերուս տեղը պիտի փառաւորեմ» (Ես. Կ. 13): Ասիկա կը ցուցնէ թէ երկիրը Աստուծոյ փառքով դարդարելուն մէջ մարդ ոեւէ բաժին պիտի չունենայ, հապա՛ այդ բանը Աստուած է որ պիտի ընէ Քրիստոսի միջոցաւ: Նա պիտի դատէ աշխարհը արդարութիւնով, ու ժողովուրդները իր ճշմարտութիւնովը» (Մաղմ. ԴԶ. 13): Դատելու այդ դործը Աստուած Քրիստոսի միջոցաւ է որ պիտի կատարէ Անոր երկրորդ անգամ եկած ատեն (Յովհ. Ե. 22, Բ. Տիմոթէոսի Դ. 1): Այս դատաստանին ու երկրիս մաքրագործութեանը համար հաղար տարուան շրջան մը հարկ պիտի ըլլայ— Յայտ. Ի. 4:

ՆՈՐ ՀՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԵՐԿԻՐԸ

Պետրոս Առաքեալ, Աստուծոյ մարգարէին հետ համաձայն, կը յայտարարէ թէ՛ նոր երկինք մը ու նոր երկիր մը պիտի դայ որոնց մէջ արդարութիւն կը բնակի: Նոր երկինքը Քրիստոսն՝ անտեսանելի Ի-

խանն է: Նոր երկիրը՝ երկրիս վրայ արդարութեամբ կազմակերպուած մարդոց կառավարութիւնն է, որ Քրիստոսի ուսին վրայ պիտի ըլլայ (Յսայեայ Թ. 6, 7): Աբրահամ, Իսահակ, Յակոբ եւ անոնց ժամանակակից ուրիշ հաւատացեալ մարդիկ Աստուծոյ նկատմամբ իրենց հաւատարմութիւնը ցոյց տուին, որոնք իրենց գերեզմաններէն իբրեւ կատարեալ մարդիկ յարութիւն առնելով երկրիս վրայ իշխաններ պիտի ըլլան իբրեւ Քրիստոսի ներկայացուցիչները (Եբրայեցիս ԺԱ. 39, Մարմ. ԽՆ. 16): Ահա այդ ատեն պիտի իրականանայ Ս. Գրոց մարգարէութիւնը թէ՛ «Թագաւոր մը արդարութեամբ պիտի թագաւորէ, ու իշխանները իրաւունքով պիտի իշխեն»— Եսայեայ ԼԲ. 1:

Վերածնութիւն կը նշանակէ մարդկային ազգը վերանորոգել կամ մաքրագործել: Յիսուս յայտարարեց թէ Իր երկրորդ անգամ եկած ատեն մարդկային ազգին վերածնութիւն պիտի չնորհէ, եւ թէ Իրեն հետեւողները այդ գործին մէջ Իրեն պիտի ընկերակցին (Մատթ. ԺԹ. 28): Աստուած՝ Քրիստոս Յիսուսը պիտի դրկէ վերանորոգման այդ մեծ գործը դուրս հանելու համար, ինչպէս Գործք Գ. 20—էն մինչեւ 23—ըզ համարներուն մէջ որոշապէս գրուած է: Քրիստոսի թագաւորութեան հաստատուելովը մաքրագործումի ճամբայ մը պիտի բացուի, որ սուրբ (կամ՝ սրբացման) ճամբայ կոչուած է. «Եւ հոն պողտոյ ու ճամբայ պիտի ըլլայ, ու անիկա սուրբ ճամբայ պիտի ըսուի. անկէ պիղծ մէ՛կը պիտի չանցնի, հապա անիկա անոնց համար պիտի ըլլայ. այն ճամբուն մէջ քալողը՝ ու յիմարները անգամ պիտի չմուտնան»— Եսայ. ԼԵ. 8:

Մարդիկ շատ մը թշնամիներ ունին, ատոնցմէ են մարմնի տկարութիւններ, ոճրագործութիւն, հիւանդութիւն, մահ եւ զանազան մեղքեր: Մարդիկ

անձամբ երբէք չեն կրնար յաղթել այդ թշնամիներուն: Եհովայի հետ ըրած իրենց ուխտին ներքեւ՝ Հրէաները 1800 տարի ջանացին այդ բանը ընել, եւ անոնք ցոյց տուին թէ մարդս բացարձակապէս անկարող է կեանք ստանալ: Արդիական քարոզիչները կը ջանան ժողովուրդին ներկայիս հաւատացնել թէ՛ մարդիկ կրնան ինքզինքնին մաքրագործել ու բարձրացնել բարոյական կատարեալ չափանիշի եւ առողջութեան ու կենաց կատարեալ վիճակի մը: Թէ որ այդ տեսակ բան մը կարելի ըլլար, այն ատեն պէտք պիտի չըլլար Աստուծոյ փրկութեան ծրագրին: Աստուած կարգադրած է Քրիստոս Յիսուսի միջոցաւ երկիրը մաքրագործել ու մարդուն թշնամիները ոչնչացնել: Երկինց տակ տրուած ուրիշ անուն մը չկայ որով մարդիկ կրնան փրկուիլ ու օրհնուիլ (Գործք Գ. 12): Քրիստոս ճիշդ այն նպատակով կուգայ եւ Իր արդար կառավարութիւնը կը հաստատէ՝ որ մարդուն թշնամիները տապալէ ու ոչնչացնէ եւ մարդիկ կարենան կենաց օրհնութիւններն ստանալ: Այս կէտին շուրջ Ս. Գիրքը բացայայտօրէն կը խօսի. «Վասն զի անոր պէտք է թագաւորութիւն ընել՝ մինչեւ բոլոր թշնամիները իր ոտքերուն տակ դնէ: Վերջին թշնամին որ պիտի խփանէ՝ մահն է»— Ա. Կորնթ. ԺԵ. 25, 26:

Յայտնութեան դիրքը խորհրդաբանական լեզուով գրուած է: Յայտնութեան ԻԱ. 1—ը կ'ըսէ. «Եւ նոր երկինք մը ու նոր երկիր մը տեսայ. վասն զի առաջին երկինքը ու առաջին երկիրը անցան, եւ ա՛լ ծով չկար»: Հոս յիշուած նոր երկինքը՝ նոր եւ արդար իշխող անտեսանելի գօրութիւնը՝ փառաւորուած Քրիստոսն է: Յիշուած նոր երկիրը՝ մարդոց համար հաստատուած արդար կառավարութեան տեսանելի նոր կազմակերպութիւնը պիտի ըլլայ: Այդ ժամանակ՝ բոլորովին ոչնչացուած պիտի ըլլան Եկե-

ղեցիներու Դաշնակցային Ժողովը եւ նմանօրինակ բոլոր կազմակերպութիւնները, ինչու որ անոնք հին աշխարհին կը պատկանին:

Յայտնութեան դիրքը կը շարունակէ ըսելով. «Ու երկինքէն մեծ ձայն մը լսեցի՝ որ կ'ըսէր, Ահա Աստուծոյ խորանը մարդոց մէջ, ու անիկա անոնց հետ պիտի բնակի. եւ անոնք անոր Ժողովուրդը պիտի ըլլան, եւ Աստուած ինք անոնց հետ պիտի ըլլայ իբրեւ անոնց Աստուածը. եւ ինք անոնց աչքերէն բոլոր արցունքները պիտի սրբէ, եւ ա'լ մահ պիտի չըլլայ, ոչ սուգ եւ ոչ աղաղակ եւ ոչ ցաւ պիտի ըլլայ ասկէ ետեւ. վասն զի առաջուան բաները անցան: Եւ ան որ աթոռին վրայ կը նստէր՝ ըսաւ, Ահա ամէն բաները նոր կ'ընեմ. ու ըսաւ ինծի, Գրէ, վասն զի այս խօսքերը ճշմարիտ ու հաւատարիմ են»— Յայտնութեան ԻԱ. 3-5:

Ուստի հոս բացայայտօրէն ըսուած է թէ՛ Աստուած ինքն է որ Քրիստոսի միջոցաւ Ժողովուրդին աչքերէն պիտի սրբէ բոլոր արտասուքները, զանոնք պիտի մաքրէ իրենց բարոյական մեղանչումներէն, մէջտեղէն պիտի վերցնէ ցաւ, լաց, հիւանդութիւն ու մահ, եւ երկիրս բնակութեան յարմար վայրի մը պիտի վերածէ: Տարօրինակ կը թուի որ՝ մարդիկ կրնան խաբուիլ ու հաւատալ թէ մարդկային ոեւէ տեսակ դաշնակցութիւն, դրութիւն կամ կազմակերպութիւն, կրնայ գլուխ հանել այն հրաշալի դործը զոր Աստուած միայն կրնայ ընել ու պիտի ընէ Քրիստոսի միջոցաւ:

ՆԻՒԹԱԿԱՆ ԵՐԿԻՐԸ

Այս երկրագունդը որուն վրայ մենք կ'ապրինք՝ կատարեալ դրախտի մը պիտի վերածուի: Սկիզբէն մի միայն եղեմ կատարեալ էր: Այն իրողութեանը թէ

Աստուած խոստացած է Իր ոտքերուն տեղը փառաւորել՝ վճռական ապացոյց է թէ ատիկա պիտի իրագործուի, ու այդ կը նշանակէ թէ նիւթական երկիրը ուրախութեան եւ հրճուանքի վայրի մը պիտի վերածուի: Փուշեր ու տատասկներ երկիրը ծածկած եւ մարդուն համար դժուարացուցած են հողը հերկել եւ պիտանի սննդեղէն արտադրել: Աստուած ատոնք մէջտեղէն պիտի վերցնէ ու ա'լ թոյլ պիտի չտայ որ անոնք մարդուն ոեւէ դժուարութիւն յարուցանեն: Անկասկած՝ Աստուած մարդուն պիտի սորվեցնէ թէ ինչ ընելու է հողը աւելի արգասաբեր ընելու համար: «Թուիին տեղ մայր, ու դժնիկին տեղ մրտենի պիտի բուսնի. ու ասիկա Տիրոջը անուանը փառքին համար անջինջ ու յաւիտենական նշան մը պիտի ըլլայ»— Եսայեայ ԾԵ. 13:

Ներկայիս ահագին տարածութեամբ անապատ կամ խոպան երկիրներ կան որոնք ոչինչ կ'արտադրեն: Հետեւեալ համարները ցոյց կուտան թէ Աստուած ինչ պիտի ընէ այդ անապատ ու խոպան երկիրներուն. «Անապատը ու չոր երկիրը պիտի ուրախանայ. եւ անբնակ երկիրը պիտի ցնծայ, ու շուշանի պէս պիտի ծաղկի: Անիկա բոլորովին պիտի ծաղկի, եւ ցնծութեամբ ու երգերով պիտի ուրախանայ. անոր պիտի տրուի Լիբանանի փառքը, Կարմեղոսի ու Սարծնի վայելչութիւնը. անոնք Տիրոջը փառքը, մեր Աստուծոյն վայելչութիւնը, պիտի տեսնեն: ... Եւ խորշակահար երկիրը լիճի պիտի դառնայ, ու ծառաւտ երկիրը ջուրի աղբիւրներ պիտի բղխէ. եւ չազաններուն պառկած բնակարանը եղէգի ու կնիւնի դաւիթ պիտի ըլլայ»— Եսայեայ ԼԵ. 1, 2, 7:

Իր այն յայտարարութեան համաձայն թէ՛ Իր ոտքերուն տեղը պիտի փառաւորէ, Աստուած դարձեալ կ'ըսէ երկրիս ամայի հողերուն մասին. «Եւ այն ամայացած երկիրը, ամէն անցնողին աչքերուն առ-

Ղեւ ամայի ըլլալուն տեղ, պիտի մշակուի: Ու պիտի ըսեն, Այս ամայացած երկիրը Եդեմի դրախտին պէս եղաւ. եւ աւերակ, ամայի ու փլած քաղաքները պարսպաւոր ու մարդաբնակ եղան» — Եղեկիւ- ելի ԼԶ. 34, 35:

Ուրեմն՝ ինչո՞ւ մարդիկ բէտիօյի կայանէն ժողովուրդին յայտարարեն թէ՛ մարդակերտ կազմակերպութիւն մը դործի մղուելով կրնայ երկիրը մաքրագործել եւ դայն մարդոց բարոյական ձեռնարկութիւններուն շնորհիւ Աստուծոյ փառքովը զդեստաւորել: Այդ տեսակ յայտարարութիւններ ընող մարդ մը պէտք է դիտցած ըլլայ թէ՛ այդպիսի բան մը անկարելիութիւն է: Խոհուն անձինք դիտեն թէ մարդիկ չեն կրնար այդ տեսակ բան մը գլուխ հանել: Ուրեմն ինչո՞ւ այդպիսի յայտարարութիւններ կ'ընեն: Պատասխանը այն է թէ՛ ատիկա այն միջոցներէն մին է զոր մեծ թշնամի Սատանան կը դործածէ ժողովուրդին միտքը բթացնելու եւ դանոնք ճշմարիտ ու հզօր Աստուծմէ հեռացնելու համար:

Ներկայի մեծ հարցն է՝ Ո՞վ է Աստուած: Ներկայիս Եհովայի անունը բարձրացած է. ու ժողովուրդը պարտի գիտնալ թէ՛ Նա՛ է Աստուած: Այժմ մարդիկ պարտին՝ ի սէր իրենց բարօրութեանն ու երջանկութեանը՝ հրաժարիլ ու մշտնջենապէս երեսի վրայ թողուլ այն դասալիք կազմակերպութիւնը որ «կազմակերպեալ Բրիստոնէութիւն» կամ «Բրիստոնէայ Աշխարհ» անունը կուտայ ինք իրեն, եւ իրենց սիրտերն ու միտքերը ամբողջովին դարձնել ճշմարիտ ու կենդանի Աստուծոյ, որ ներկայիս Իր Թագաւորութիւնը կը հաստատէ երկրիս վրայ, որուն միջոցաւ երկրիս բոլոր ազգերը պատեհութիւնը պիտի ունենան կենաց օրհնութիւնները եւ յարակից ուրիշ ըզձայի բաներ ստանալու:

Եհովան է միակ ճշմարիտ ու կենդանի Աստուածը: Անոր Խօսքը ճշմարտութիւնն է: Երբ մարդոց խօսքերը Աստուծոյ Խօսքին հետ համաձայն չեն՝ այն ատեն կը հասկնանք թէ անոնք ճշմարտութիւն չեն: Պօղոս Առաքեալ նմանօրինակ նիւթի մը շուրջ կը ճառէր երբ սա բառերը կը դործածէր. «Աստուած ճշմարիտ թող ըլլայ, եւ բոլոր մարդիկ՝ սուտ» — Հռովմայեցիս Գ. 4:

Սխմի.— Քեզի մտիկ ընելէս վերջ՝ ուրախ կը դգամ որ ես Դաշնակցած Եկեղեցիներու քարոզիչ մը չեմ: Ես ուրախ պիտի ըլլամ երբ տեսնեմ որ ժողովուրդին օրհնութիւններուն մասին քու բոլոր ըսածներդ իրականանան:

Տէյվիտ.— Ինձ հաճելի է ձեզմէ լսել այդ խօսքերը: Ես վստահ եմ որ մարդկային ազգին հսկայ դանդուածները ի սրտէ կը փափաքին բռնակալութեանէ ազատիլ, եւ անկեղծօրէն կը ցանկան մարդոց մէջ հաստատուած տեսնել արդարութեան կառավարութիւն մը՝ ուր ճշմարտութիւնը խօսուի եւ ամէն ոք ուղղամտօրէն ու մարդկութեան բարիքին համար դործէ: Անոնք նմանապէս բուն փափաք մ'ունին կենաց, առողջութեան ու երջանկութեան տիրանալու: Աստուծոյ Թագաւորութիւնը այս բոլոր բաները խոստացած է: Քու ցոյց տուած հետաքրքրութեանդ համաձայն լաւ է որ կարդաս դոնէ հետեւեալ գրքերը. ԱՍՏՈՒԾՈՅ ՔՆԱՐԸ, ՄՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ եւ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԻՒՆ, որոնց բոլորն ալ հրատարակուած են Նիւ Եորք նահանգի՝ Պրուքլին քաղաքին մէջ հաստատուած Միջազգային Սբ. Գիրք Ուսանողաց Միութեան կողմէ: Երբ խնդիրը աւելի խոր կերպով հետազօտես, յուսամ թէ քեզի դարձեալ հանդիպելու հաճոյքը պիտի ունենամ: Տիրոջ Թագաւորութեան նիւթը խիստ մօտ է իմ սրտիս, ինչու որ դիտեմ թէ՛

մի միայն ատոր միջոցաւ է որ մարդիկ հանգստութիւն ու մխիթարութիւն պիտի գտնեն. եւ ուրախ եմ տեսնելու թէ՛ այդ Թագաւորութիւնը խիստ մօտեցած է, ու շքեղ վառքով ու զօրութեամբ պիտի հաստատուի երկրիս վրայ:

(Վերջ)

ՄԲ. ԳԻՐԲԸ ՈՐՈՇ ԿԵՐՊՈՎ ՄԵԶԻ ԿԸ ՍՈՐՎԵՅՆԷ

Թէ՛ ԵՀՈՎԱՆ է միակ ճշմարիտ Աստուածը, Արարիչն երկնի եւ երկրի, եւ է՛ ի յաւիտենից մինչեւ յաւիտեանս. թէ՛ Լօղոսն էր Անոր արարածոց սկիզբը. թէ՛ Լօղոսը մարդ եղաւ. թէ՛ ներկայիս Նա երկնից մէջ ու երկրիս վրայ ամէն զօրութիւն զգեցած, փառաւորեալ Տէր Յիսուս Քրիստոսն է— Սաղմոսաց Դ. 2, Յայտնութեան Գ. 14, Առակաց Ը. 22-30, Մատթէոսի ԻԸ. 18, Կողոսացիս Ա. 15:

Թէ՛ ԱՍՏՈՒԱԾ ստեղծեց երկիրը մարդուն համար, եւ կատարեալ մարդը ստեղծելով՝ զայն երկրիս վրայ դրաւ. թէ՛ մարդը կամովին դրժեց Աստուծոյ օրէնքը եւ մահուան դատապարտուեցաւ. թէ՛ Ադամին մեղքին պատճառաւ, ամէն մարդ մեղաւոր եւ կենաց իրաւունքէն բոլորովին զուրկ կը ծնի— Ծննդոց Բ. 10, Գ. 6, Հռովմ. Ե. 12:

Թէ՛ ՅԻՍՈՒՍ մարդկային էակ մ'եղած էր՝ որպէս զի մարդուն Փրկիչն ըլլայ. թէ՛ Նա Իր կեանքը մարդուն համար զոհեց, եւ այդպէսով պատրաստեց փրկութեան զինը. թէ՛ Յիսուս մեռելներէն յարուցուեցաւ իբրեւ աստուածային էակ, երկինք համբարձաւ, եւ Իր մարդկային զոհին արժանիքը Աստուծոյ ներկայացուց՝ իբրեւ փրկարար զինը մարդուն համար:

մար— Յովհաննու Ա. 14, Բ. Կորնթացիս Ը. 9, Ա. Պետրոսի Գ. 18:

Թէ՛ ԵՐԿԱՐ ԴԱՐՆԵՐԷ Ի ՎԵՐ Աստուած, Քրիստոսի միջոցաւ, մարդոց մէջէն կ'ընտրէ Իր եկեղեցիին անդամները, որոնք կը կազմեն Քրիստոսի մարմինը. թէ՛ եկեղեցիին պաշտօնն է հետեւիլ իր Տիրոջ՝ Քրիստոս Յիսուսի քայլերուն, աճիլ Անոր նախաձեռնութեամբ, վկայութիւն տալ ԵՀՈՎԱ Աստուծոյ անունն ու ծրագրին նկատմամբ, եւ ի վերջոյ Քրիստոս Յիսուսի հետ փառաւորուիլ Անոր երկնային թագաւորութեանը մէջ. թէ՛ Քրիստոս, Գլուխ եւ մարմին, կը կազմէ «Արքահամի սերունդը», որուն միջոցաւ պիտի օրհնուին երկրիս բոլոր ազգերը— Եփեսացիս Բ. 20, 21, Գաղ. Գ. 16, 29, Ծննդոց ԻԸ. 14:

Թէ՛ ԱՇԽԱՐՀԸ ՎԵՐՁԱՅԱԾ Է. թէ՛ Տէր Յիսուս վերադարձած է եւ հիմա ներկայ է. թէ՛ ԵՀՈՎԱ նստեցուցած է Քրիստոս Յիսուսը Իր զահնի վըրայ եւ ներկայիս կը հրամայէ բոլոր ազգերուն ու ժողովուրդներուն որ Անոր մտիկ ընեն ու հնազանդին— Մատթէոսի ԻԴ-րդ Գլուխը, Յովհաննու ԺԴ. 3, Սաղմոսաց Բ. 10:

Թէ՛ ԵՐԿՐԻՍ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐՈՒՆ ԸՆԾԱՅՈՒԱԾ ՅՈՅՄԵՆ Է՝ մարդկային կատարելութեան վերահաստատութիւնը, Քրիստոսի թագաւորութեան միջոցին. թէ՛ Քրիստոսի թագաւորութիւնը ամէն մարդու կատարեալ պատեհութիւն մը պիտի ընծայէ կեանք ստանալու՝ եւ անոնք որ կը հնազանդին, պիտի ապրին երկրիս վրայ յաւիտեան երջանիկ— Յովհաննու Ա. 9, Ղուկասու ԺԹ. 10, Ա. Տիմոթէոսի Բ. 3-6, Գործք Գ. 22, 23:

ԵՐԿՈՒ ԽՕՍԻ

Գիրք հրատարակել չէ մեր գործը, եւ ոչ ալ գիրք գրելը կամ գիրք ծախելն է մեր գործը: Այս երեք ձեռնարկները միայն միջոցներ են, կամ հարկաւոր են մեր գլխաւոր գործը յառաջ տանելու համար:

Մեր բուն կամ գլխաւոր գործն է՝ բոլոր գիտնալ փափաքողներուն գիտցնել թէ՛ Նհովա զարմանալի ծրագիր մ'ունի, որով հոս՝ այս մեր երկրագունդին վրայ, թէ՛ Հայերը եւ թէ՛ աշխարհի բոլոր ազգերը երջանկութիւն, ազատութիւն, կատարեալ առողջութիւն եւ յաւիտենական կեանք պիտի կրնան ստանալ:

ԱՍՏՈՒԾՈՅ ՔՆԱՐԸ.— Աշխարհահռչակ քարոզիչ՝ Դատաւոր Բըթհըրֆորտի կարող գրչին արգիւնքը եղող այս 384 էջնոց լաթակաղմ հատորը՝ Սբ. Գրոց վերաբերեալ գրեթէ ամէն հարց համողիչ կերպով կը պատասխանէ: Մէկ ժամ այս գրքէն կարդացողը շատ աւելի բան կը սորվի՝ քան թէ տարի մը աստուածաբանական ճեմարան յաճախողը: Այս կարեւոր հատորին գինն է միայն 35 սէնթ:

Ներկայ ձգմարտութիւնը կը հրատարակենք 30-էն աւելի տարբեր լեզուներով. փափաքողներուն պատրաստ ենք զրկելու թէ՛ մեր Հայերէն գրքերուն եւ թէ՛ միւս լեզուներով հրատարակած զբաղանդութիւններուն լիակատար ցուցակը:

Նամակ կամ դրամ զրկուելու է ԳԻՏԱՐԱՆ-ի անուան եւ հասցէին, որ հետեւեալն է՝

THE TIDARAN

117 Adams Street, Brooklyn, N. Y., U. S. A.

ԳԻՏԱՐԱՆԸ



ԳԻՏԱՐԱՆԸ եւ Քրիստոսի Ներկայութեան Մունետիկը.— Միջազգային Սբ. Գիրք Ուսանողաց Միութեան Հայկական Բաժնին 16 էջնոց պաշտօնական ամսաթերթը, որ կը հրատարակուի՝ օգնելու համար մեր ձըմարտասէր ազգայիններուն որպէս զի անոնք տեղեակ ըլլան՝ թէ՛ Հայերու եւ թէ՛ բոլոր ազգերու ձգմարտ ազատագրութեան համար Աստուծոյ պատրաստած ծրագրի մասին:

Ձգմարտութիւնը փնտոող մը շատ յառաջ չկըրնար երթալ իր քննութեանց մէջ՝ առանց ԳԻՏԱՐԱՆ-ի օգնութեան: ԳԻՏԱՐԱՆ-ը՝ մեր ամենօրեայ կրօնական, քաղաքական, գիտական եւ առողջապահական կեանքէն օրինակներ վեր առնելով՝ ցոյց կուտայ թէ Սբ. Գրոց մարգարէութիւնները զարմանալի կերպով կը կատարուին ներկայիս՝ ճիշդ մեր աչքին առջեւ:

1921-էն սկսեալ՝ ԳԻՏԱՐԱՆ-ը անընդհատ կը հրատարակուի, արձակելով իր սիրտիարար ճառագայթները՝ աշխարհի չորս կողմը գտնուող մեր բազմաչարչար ազգայիններուն վրայ:

ԳԻՏԱՐԱՆ-ի տարեկան բաժնեգինն է՝ \$1.00 Ամերիկայի, եւ \$1.50 արտասահմանի համար. իսկ ճրի է անոնց՝ որ կը գնահատեն թերթը, բայց անկարող են բաժնեգինը վճարելու:

ԳԻՏԱՐԱՆ-ը կը հրատարակուի նաեւ 21 տարբեր լեզուներով. փափաքողներուն ճրի նմոյշներ կրնանք զրկել: Մեր հասցէն է հետեւեալը՝

THE TIDARAN

117 Adams Street, Brooklyn, N. Y., U. S. A.



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՍԲ. ԳԻՐԳ ՈՒՍԱՆՈՂԱՅ ՄԻՈՒԹԻՒՆ

Ի՞նչ է ԱՅՍ ՄԻՈՒԹԻՒՆԸ.— 1884-էն ի վեր կաղմակերպուած ճշմարիտ Գրիստոնեաներու միութիւն մըն է, առանց ազգային կամ յարանուանական խտրութեան:

ՆՊԱՏԱԿԸ.— Այս Միութեան նպատակն է, Յիսուսի՝ ճնադադութեան Իշխան»-ին անունով, երկրիս վրայ խաղաղութիւն, սէր եւ խնդութիւն հաստատել. ազատել մարդկութիւնը խաւար դարերէն ներկայ սերունդին հասած դաւանանքներու, աւանդութիւններու եւ նախապաշարումներու կապանքէն, լուսաւորելով բոլոր ազգերը Ս. Գրոց ճշմարիտ ուսուցումներով:

ՆՊԱՏԱԿԻՆ ԳՈՐԾԱԴՐՈՒԹԻՒՆԸ.— Միութիւնս իր նպատակը կը տարածէ՝ 30-էն աւելի լեզուներու թարգմանուած թերթերով եւ դրքերով, բէտիօյով, թէ՛ ուսումնասիրութեան եւ թէ՛ հրապարակային ժողովներով, եւ Գրիստոնէալայն կեանքով:

ԱՆԴԱՄԱՆՅՈՒԹԻՒՆԸ.— Այս Միութիւնը անդամակցութեան տոմար չի բռներ, քանի որ այդ տոմարը բռնողը Աստուած ինքն է, որ ի սրտէ իրեն նուիրուողներուն անունները երկնից մէջ կ'արձանագրէ (Եբր. ժԲ. 23): բայց ամէն անոնք որ ձգձարտութեան համար անօթի ու ծարաւի են, սիրով կը հրաւիրէ իր Սբ. Գրոց ուսումնասիրութեան ժողովներուն՝ որոնք տեղի կ'ունենան աշխարհի ամէն կողմերը թէ՛ Հայերէն եւ թէ՛ 30-էն աւելի զանազան լեզուներով:

ԴՐԱՄԸ.— Միութեանս դործը՝ իր սկզբնաւորութենէն ի վեր, կամաւոր նուիրատուութիւններէ զոյացած դրամով է որ յառաջ կը տարուի: Միութեանս կամ անոր Հայկական Բաժնին նուէր զրկուած դրամը, մի միայն իր նպատակին՝ թէ՛ Հայոց եւ թէ՛ հանուր մարդկութեան հողերը կենաց բարեկաւութեանը համար կը դործածուի:

Եթէ կը զնահատէք այս Միութեան կամ անոր Հայկական Բաժնին մատուցած ծառայութիւնը եւ կ'ուղէք դործակցիլ ոեւէ կերպով, ատկա ձեր լուրը եւ աղօթալիբ դատողութեանը կը ձգենք:

Բոլոր թղթակցութիւնները կամ նուէրները զրկուելու են ԴԻՏԱՐԱՆ-ի անուան ու հասցէին, որ հետեւեալն է՝

THE TIDARAN

117 Adams Street, Brooklyn, N. Y., U. S. A.



